



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 15 (472) «01» հունիսի 2022թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ</b>		
316	«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-38-Ն օրենքը.....	3
317	«Հարկերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-39-Ն օրենքը.....	4
318	«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-40-Ն օրենքը.....	6
<b>ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ</b>		
319	«Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի դիմումների հիման վրա՝ «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով և «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով Արցախի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ԱՀ Գերագույն դատարանի ԳԴՈ-26 որոշումը և հատուկ կարծիքը .....	7
<b>ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ</b>		
320	«Արցախի Հանրապետության բռնազավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհուրդ ստեղծելու և խորհրդի աշխատակարգը սահմանելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-950-Ն հրամանագիրը.....	41
321	«Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-967-Ն հրամանագիրը.....	46
<b>ՑՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>		
322	«Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի	

	մարտի 3-ի N 199-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 621-Ն որոշումը.....	50
323	«Շահումյանի անասնաբուժական սպասարկման կայան» և «Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 628-Ն որոշումը.....	51
<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>		
324	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ՆՀ-110-Ա հրամանը.....	53
325	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ՆՀ-113-Ա հրամանը.....	55
326	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայի գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 160-Ա հրամանը.....	57
<b>ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՑԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>		
327	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/0011/02/18 որոշումը.....	58

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2022 թվականի  
մայիսի 19-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-68-Ն օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «պաշտոնների համար» բառերից հետո լրացնել «մինչև 2022 թվականի հունվարի 1-ը» բառերը.

2) 3-րդ մասից հանել «, գործակիցը» բառը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. մայիսի 31  
Ստեփանակերտ  
ՀՕ-38-Ն

Ընդունված է 2022 թվականի  
մայիսի 19-ին

**«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հարկերի մասին» 1998 թվականի հունիսի 16-ի ՀՕ-23 օրենքի 30-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների (այսուհետ սույն հոդվածում՝ հարկային պարտավորություն) առաջացման դեպքում, բացառությամբ ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքերի, հարկային մարմինը կարող է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցել չկատարված հարկային պարտավորությունների գանձման վարչական վարույթ, եթե չկատարված հարկային պարտավորության չափը գերազանցում է 500 000 ՀՀ դրամը կամ հարկային պարտավորության առաջացման օրվանից հետո անցել է երկու ամսից ավելի ժամանակ: Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված հարկային պարտավորությունները Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում չվճարվելու դեպքում նշված ստուգման կամ այլ վարչական ակտերը կատարվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Սույն մասին համապատասխան՝ գանձման (վճարման) ենթակա հարկային պարտավորությունները ենթակա են կատարման մինչև կատարման օրը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերի և տուգանքների հետ միասին:».

2) 1.1-ին մասի երրորդ նախադասությունը հանել.

3) 15-րդ մասի 3-րդ կետից հանել «կատարման վերաբերյալ» բառերը.

4) 16-րդ մասում «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «հարկային պարտավորության» բառերը.

5) 16-րդ մասում և 17-րդ մասի 2-րդ կետում «հարկային պարտավորությունը մարելու վերաբերյալ» բառերը փոխարինել «հարկային պարտավորության» բառերով.

6) 35-րդ և 36-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Սույն հոդվածով նախատեսված արգելադրման դեպքում առկա հարկային պարտավորության ոչ պակաս, քան 20 տոկոսը մարելուց հետո, եթե հարկ վճարողը դիմում է հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց կնքելու համար և ներկայացնում է բավարար հիմքեր իր վճարունակության վերաբերյալ, ապա հարկային մարմինն իրավունք ունի մնացած հարկային պարտավորությունը մարելու վերաբերյալ հարկ վճարողի հետ կնքել հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց, որի տևողությունը կարող է սահմանվել մինչև հինգ ամիս ժամկետով:

36. Հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցով սահմանված յուրաքանչյուր վճարման ժամկետն ավելի քան 10 օրով խախտելու դեպքում հարկային մարմինը դադարեցնում է

հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը, որի մասին օրենքով սահմանված կարգով ծանուցում է պարտապանին:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. մայիսի 31  
Ստեփանակերտ  
ՀՕ-39-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2022 թվականի  
մայիսի 19-ին

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ավելացված արժեքի հարկի մասին» 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-43 օրենքի 15-րդ հոդվածի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24) արտադրողի կողմից Արցախի Հանրապետությունում արտադրված ԱՏԳ ԱԱ 1905 ծածկագրին դասվող հացի և լավաշի օտարումը.»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. մայիսի 31  
Ստեփանակերտ  
ՀՕ-40-Ն

**ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՅԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ԼՂՀ ՕՐԵՆՔԻ 67-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԲԱՅՑ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ  
ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ՅԱՄԱՐ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ,  
«ԱՉԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ԼՂՀ ՕՐԵՆՔԻ 50-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԲԱՅՑ ՈՉ  
ԱՎԵԼԻ, ՔԱՆ ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ՅԱՄԱՐ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍՈՎ ԵՎ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼՂՀ  
ՕՐԵՆՔԻ 52-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԲԱՅՑ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ  
ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ՅԱՄԱՐ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԱՐՑԱԽԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ**

ք.Ստեփանակերտ

25-ին մայիսի 2022թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ կազմով. Ն.Նարիմանյանի (նախագահող), Գ.Գրիգորյանի (զեկուցող), Ա.Աբրահամյանի, Հ.Աբրահամյանի, Հ.Խաչատրյանի, Ի.Կարապետյանի, Կ.Ղարայանի,

համաձայն Արցախի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 140-րդ հոդվածի 2-րդ մասի, 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ, 14-րդ հոդվածների և 59-րդ հոդվածի 1-ին մասի,

դռնբաց դատական նիստում՝ գրավոր ընթացակարգով, քննեց Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ նաև Դիմող) դիմումների հիման վրա՝ «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով և «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը:

ա) «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ ՀՕ-78 օրենքը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի նոյեմբերի 26-ին, ԼՂՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2003 թվականի դեկտեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի հունվարի 1-ին:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողներին մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում նրա՝ չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար:

Այն ծառայողներին, ովքեր արձակման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ, փոխհատուցումը վճարվում է նրանց՝ զբաղեցրած վերջին պաշտոնի աշխատավարձի և ծառայությունից արձակված

Ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության չափով, բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար»:

բ) «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ ՀՕ-2 օրենքը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 6-ին, ԼՂՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի հունվարի 15-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի հունվարի 19-ին:

«Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Փրկարարական ծառայությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում՝ նրան չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար»:

գ) «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ ՀՕ-77 օրենքը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի նոյեմբերի 26-ին, ԼՂՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2003 թվականի դեկտեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի հունվարի 01-ին:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Ոստիկանությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում՝ նրան չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար»:

Այն ծառայողներին, ովքեր ազատման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ՝ հատուցումը վճարվում է նրանց՝ զբաղեցրած ոստիկանության վերջին պաշտոնի պաշտոնեական դրույքաչափի և ոստիկանությունում ծառայությունից ազատված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար»:

Իրավական նշված ակտերը Դիմողի կողմից վիճարկվում են «բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» կարգավորման մասերով, որոնք նախատեսված են եղել համապատասխան օրենքների սկզբնական տարբերակներում և հետագայում որևէ փոփոխության չեն ենթարկվել:

Գործի քննության առիթն Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 21-ին, հունվարի 27-ին և ապրիլի 15-ին Գերագույն դատարան մուտքագրված դիմումներն են, որոնցով ներկայացվել են 2022 թվականի հունվարի 21-ի ԸԲԴ/1269/02/21 քաղաքացիական գործով, 2022 թվականի հունվարի 26-ի ԸԲԴ/1028/02/21 քաղաքացիական գործով և 2022 թվականի ապրիլի 15-ի ԸԲԴ/1236/02/21 քաղաքացիական գործով Գերագույն դատարան դիմելու մասին որոշումները:

Գերագույն դատարանի 2022 թվականի փետրվարի 24-ի ԳԴԱՈ-38 և ԳԴԱՈ-39, մարտի 18-ի ԳԴԱՈ-41 և ապրիլի 28-ի ԳԴԱՈ-42 աշխատակարգային որոշումներով ներկայացված դիմումներն ընդունվել են Գերագույն դատարանի վարույթ, միավորվել և նշանակվել նույն դատական նիստում քննության:

Ուսումնասիրելով դիմումները, Դիմողի և պատասխանող կողմի գրավոր բացատրություններով արտահայտած դիրքորոշումները, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկված, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված այլ իրավական նորմերը՝ Գերագույն դատարանը

## **Պ Ա Ր Զ Ե Ց.**

### **1. Դիմողի դիրքորոշումը**



Ըստ Դիմողի՝ դատական պաշտպանության իրավունքը խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքն է, իսկ մյուս կողմից՝ դատարանի պարտականությունը՝ քննելու գործը և կայացնելու օրինական և հիմնավորված որոշում: Խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան: Դատարան դիմելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից կարևոր է նաև այն հանգամանքը, թե ինչպիսի իրավական պայմաններ են առաջադրված դատարան դիմելու իրավունքն իրացնելու, հետևաբար նաև դրանով պայմանավորված՝ դատավարական կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, վերականգնելու համար:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային /ծառայողական/ հարաբերությունները կարգավորվում են նույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Դիմողը գտնում է, որ նշված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում պետք է արձանագրել, որ վերոնշյալ հոդվածները, սահմանելով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի գործողության ոլորտները, դրանց մեջ ներառել են նաև քաղաքացիական և պետական ծառայության հետ կապված իրավահարաբերությունները: Այսինքն, նշված ծառայությունների հետ կապված իրավահարաբերությունները դուրս չեն աշխատանքային օրենսդրության կարգավորման շրջանակներից: ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի նորմերի կիրառումը հանրային ծառայության (որի թվում է նաև ազգային անվտանգության մարմնում, արտակարգ իրավիճակների պետական ծառայությունում և ոստիկանությունում ծառայությունը) նկատմամբ ամբողջական չէ, և հանրային ծառայությունը և դրա տեսակները կարգավորող օրենքներով այլ բան նախատեսված լինելու դեպքերում կիրառվում են այդ իրավական ակտերով նախատեսված կանոնակարգումները:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերը կարգավորող 265-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը և «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ

հողվածի 2-րդ մասը սահմանում են, որ ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողին մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում նրա՝ չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար:

Նշված նորմերը, ըստ Դիմողի, ծառայողին հնարավորություն չեն տալիս մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար ամբողջությամբ ստանալ այն վաստակը՝ աշխատավարձը, որը նա կորցրել է անհիմն կամ անօրինական արձակվելու հետևանքով, ինչպիսի հնարավորություն արդարացիորեն երաշխավորված է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով:

Նշվածների հիման վրա Դիմողն արձանագրում է, որ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների համատեքստում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող նորմերն իրավական իմաստով և տառացի մեկնաբանմամբ չեն երաշխավորում ծառայությունից անհիմն և անօրինական արձակվելու արդյունքում իրավունքի խախտման հետևանքով առաջացած բացասական հետևանքներն ամբողջությամբ վերացնելու, ծառայողի՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու՝ մինչև ծառայությունում վերականգնելու ամբողջ ժամանակահատվածի համար չստացված աշխատավարձը, որը նա կստանար, եթե նրա այդ իրավունքը չխախտվեր, ստանալու հնարավորությունը, այսինքն հակասում են նշված հոդվածներին, այն դեպքում, երբ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է նաև մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով, որը դատարանների կողմից չապահովելու արդյունքում կխախտվի ծառայողի՝ աշխատավարձը ստանալու իրավունքը, և անհնարին կդառնա այդ իրավունքի պաշտպանությունն ու վերականգնումը:

Ըստ Դիմողի՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասում, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասում և «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված նորմերը՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում համաչափ և արդյունավետ միջոց չեն ծառայողի խախտված իրավունքները վերականգնելու և անօրինական կարգով ծառայությունից արձակելու հետևանքով չստացված աշխատավարձը ստանալու համար:

Նման իրավակարգավորմամբ լիարժեք հաշվի չի առնվում արդար դատաքննության շրջանակներում տվյալ ծառայողի՝ իր չստացված աշխատավարձը ստանալու հնարավորությունը, լիարժեք չի երաշխավորվում անձի արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը: Դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունն ու մատչելիությունը պայմանավորված են անձի իրավունքների, այդ թվում նաև սեփականության իրավունքի, պաշտպանության լիարժեք իրավական հնարավորությամբ:

Դիմողի կարծիքով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների իրագործման համար իրավունքների և ազատությունների վերականգնումը՝ որոշակի կառուցակարգի և ընթացակարգերի հաստատման միջոցով, պետության պարտականությունն է: Պետությունը պարտավոր է նաև ապահովել ստեղծված կառուցակարգի կողմից խախտումների արդյունավետորեն

կանխումը և վերացումը: Երբ գործող օրենսդրությունն անհնարին է դարձնում անձանց հայցադիմումների հիման վրա նրա աշխատանքային իրավունքների խախտման արդյունքում ծագած բոլոր բացասական հետևանքները վերացնելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու եղանակով անօրինական կարգով ծառայությունից արձակելու հետևանքով չստացված աշխատավարձը ստանալու հարցում դատական պաշտպանությունը, ապա այն անհամատեղելի է իրավական պետության կողմից որդեգրված սկզբունքներին և մոտեցումներին:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներով արձանագրել է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է կամ ուժքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներով շեշտել է, որ «սեփականություն» հասկացությունը բովանդակում է ոչ միայն ֆիզիկական բարիքների սեփականությունը, այլև սեփականություն կարող են համարվել որոշ գույքային այլ իրավունքներ և շահեր, ինչպես նաև՝ անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը:

ՀՀ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ աշխատավարձը քաղաքացու վաստակած միջոցներն են և հանդիսանում են նրա սեփականությունը:

Նշվածների հիման վրա Դիմողը հանգել է այն եզրակացության, որ վիճարկված իրավակարգավորումը չի երաշխավորում ծառայողի հայցադիմումի հիման վրա նրա իրավունքների խախտման արդյունքում ծագած բոլոր բացասական հետևանքները վերացնելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու եղանակով անօրինական կարգով ծառայությունից արձակվելու հետևանքով չստացված և Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված աշխատավարձը՝ սեփականությունը, ձեռք բերելու հնարավորությունը: Մասնավորապես, թեև վիճարկվող նորմով սահմանված է այնպիսի իրավական կառուցակարգ, որն առաջին հայացքից հանդես է գալիս որպես իրավունքի խախտմամբ կորցրած սեփականությունը վերականգնելու օրենսդրական երաշխիք, սակայն իրականում գրկում է աշխատողին իր չստացած աշխատավարձը՝ սեփականությունը, լրիվ ստանալու հնարավորությունից:

Համանման նորմ սահմանված է նաև «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, սակայն մյուս՝ հարկային, հյուպատոսական, դատական, զինվորական մարմիններում ծառայությունը կանոնակարգող հատուկ օրենքներում նման դրույթ առկա չէ: Հետևաբար նման ծառայողներին անօրինական կամ անհիմն ծառայությունից արձակելու դեպքում նրանց չստացած աշխատավարձի դիմաց փոխհատուցման գումարը գանձելու հարցի վերաբերյալ կիրառելի կլինի ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը: Ստացվում է, որ տարբեր ծառայություններում ծառայողների նկատմամբ անօրինական կամ անհիմն արձակվելու հետևանքով ծառայությունում վերականգնվելու պարագայում տարբերակված մոտեցում է ցուցաբերվում չստացված աշխատավարձի դիմաց փոխհատուցում ստանալու հարցում:

Նշվածը, Դիմողի կարծիքով, նշանակում է, որ.

1) տվյալ իրավիճակում պետության կողմից ապահովված չեն այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց համար հավասար հնարավորություն կտան խախտման դեպքում պաշտպանելու իրենց իրավունքները,

2) միննույն կարգավիճակն ունեցող անձանց շրջանակում տարբերակված մոտեցում է ցուցաբերված և գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից,

3) նույն իրավական կարգավիճակն ունեցող ծառայողների նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ ուստիկանությունում ծառայողները գրկվում են իրենց աշխատավարձը՝ սեփականությունը, ստանալու իրավունքից, իսկ օրինակ՝ հարկային մարմնում ծառայողի, դատական ծառայողի, զինվորական ծառայություն իրականացնողի պարագայում դրամական հատուցումը կլինի ավելի ամբողջական:

Շարադրելով՝ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածների բովանդակությունը՝ Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերի իրավակարգավորումը չի բխում անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի էությունից ու բովանդակությունից, հետևաբար այն հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածին, իսկ խտրականության և օրենքի առջև հավասարության տեսանկյունից նաև Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներին:

## **2. Պատասխանողի դիրքորոշումը**

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքն ուժի մեջ է մտել 2004 թվականի հունվարի 1-ին, իսկ «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքը 2007 թվականի հունվարի 19-ին, և անցած ժամանակահատվածում իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմերի հակասությունների մասով Ազգային ժողովում տեղեկություններ չեն ստացվել:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային և ծառայողական հարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Արտակարգ իրավիճակների պետական ծառայությունում և Ազգային անվտանգության մարմիններում ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ օրենսդրությամբ սահմանված են յուրահատուկ իրավակարգավորումներ: Որպես երաշխիք սահմանված է, որ ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված լինելու դեպքում մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում առավելագույնը երեք ամսվա համար, որը ողջամիտ ժամանակ է տվյալ հարցի լուծման համար:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ԼՂՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով զինծառայողներ են համարվում Արցախի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք և այդ օրենքով դատական կարգով ծառայությունից արձակվելու հրամանն անվավեր ճանաչելու դեպքում հարկադիր պարապյուրդի ժամանակահատվածի համար վճարման առանձնահատկություններ սահմանված չեն, պատասխանողը գտնում է, որ քննարկվող ծառայությունների և զինվորական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքների միատեսակ մոտեցումը կլինի արդարացված:

## **3. Գերագույն դատարան ներկայացված այլ դիրքորոշումները**

3.1) Ըստ ներքին գործերի նախարարության դիրքորոշման՝ «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» օրենքով սահմանված ծառայության անցման կարգը և պայմանները, այդ թվում տարիքային սահմանափակումները, պաշտոնի նշանակման և

կոչումներ շնորհելու կարգը, ծառայողներին հատկացվող սոցիալական վճարները, արտաժամյա ծառայությունը և արձակուրդի ժամկետներն այլ են, քան նախատեսված են ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով և այլ օրենքներով:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 3.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խտրականություն չեն համարվում այն դեպքերը, երբ այդպիսի տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված են հետապնդվող իրավաչափ նպատակով, և այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ են ու անհրաժեշտ:

Պետական ծառայությունը, որպես հանրային ծառայության բաղկացուցիչ մաս, իրենից ներկայացնում է մասնագիտական գործունեություն, որն ուղղված է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Պետական մարմիններին, մասնավորապես, արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման բնականոն ընթացքի խաթարումը կարող է բերել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ոտնահարման, պետական և հասարակական կարգի խախտման, ինչպես նաև մարդկային և նյութական անդառնալի կորուստների:

Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության հիմնական և առաջնային խնդիրներից է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ մարդկանց կյանքի ու առողջության փրկումը, պահպանումը, փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ տուժածներին օգնություն ցուցաբերելը: Նման խնդիրների իրականացման ժամանակ մեծ նշանակություն ունի ծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունների ճիշտ և ժամանակին կատարումը, սահմանափակ ռեսուրսների, այդ թվում՝ մարդկային, ճիշտ օգտագործումը: Արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը հանրային ծառայության այլ տեսակներից տարբերվում է իր առջև դրված՝ Սահմանադրությամբ, ԱՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված, հիմնական խնդիրներով, իրավունքներով, պարտականություններով, իրականացվող աշխատանքներով և գործունեության սկզբունքներով, որոնցից է մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայությունը:

Ըստ դիրքորոշման՝ վիճարկվող բառակապակցության սահմանումը չի հակասում Սահմանադրությանը, այլ բխում է պետական ծառայությունում հանրային և մասնավոր շահերի ճիշտ հավասարակշռման անհրաժեշտությունից, ինչպես նաև հանրային ծառայության կայունության սկզբունքից: Նման իրավակարգավորումը, ըստ էության, պայմանավորված է պետական ծառայողների կողմից իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացման համար արագ գործելու պարտականությամբ, իրավունքների չարաշահման սահմանափակման, ինչպես նաև պետական մարմիններին վերապահված լիազորությունների բնականոն ընթացքն արագ վերականգնելու, թափուր հաստիքները համալրելու ցանկությամբ:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու այն դեպքերը, երբ գործատուն մինչև լուծելը պարտավոր է ծանուցել աշխատողին, ընդ որում, ծանուցման ամենաերկար ժամկետը 60 օրն է: Այսինքն օրենսդիրը համարում է, որ այդ ժամկետը բավարար է նոր աշխատանք փնտրելու և գտնելու համար: «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով

նախատեսված երեք ամսվա փոխհատուցում տալը չի հակասում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին, քանի որ 3 ամիսը բավարար է նոր աշխատանք փնտրելու համար և նույնիսկ անհիմն ծառայությունից ազատելու դեպքում հարկադիր պարապտորդը չի գերազանցի այդ ժամկետը:

3.2) Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված դիրքորոշման համաձայն՝ 2003 թվականի նոյեմբերի 26-ին ընդունված «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքը սահմանում է Արցախի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններում ծառայության հիմնական սկզբունքները, կարգը, պայմանները, ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնները և զինվորական կոչումները, ազգային անվտանգության մարմինների ծառայողների իրավունքները և պարտականությունները, նրանց պաշտոնական երաշխիքները, ծառայության և հանգստի ժամանակը, արձակուրդը, զինվորական կոչում շնորհելու, կոչումն իջեցնելու և վերականգնելու, ծառայությունից արձակելու, ինչպես նաև ծառայության հետ կապված այլ առանձնահատկություններ:

Հետևաբար, ազգային անվտանգության մարմիններում ծառայության հետ կապված հարաբերությունների նկատմամբ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի նորմերը կարող են կիրառվել ոչ թե ցանկացած պարագայում, այլ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում, ինչպես, օրինակ, նախատեսված է տվյալ օրենքի 52-րդ հոդվածով:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի՝ «Ծառայության կամ պաշտոնում վերականգնումը» վերտառությամբ 9-րդ գլուխը կարգավորում է ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողների աշխատանքային, սոցիալական և վարձատրության երաշխիքները և որևէ հղում չի պարունակում աշխատանքային օրենսդրության նորմերի հնարավոր կիրառության վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից դիրքորոշման հեղինակը եզրահանգել է, որ նշյալ դեպքերում օրենսդիրը սահմանել է աշխատողի և գործատուի միջև ծագած հարաբերությունների կարգավորման հստակ կանոններ, մասնավորապես հատուկ նորմը կարգավորում է տվյալ հարաբերությունները, որը չի հակասում Սահմանադրության 57-րդ հոդվածի և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 24-րդ հոդվածի պահանջներին, ուստի «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության կիրառման արդյունքում չեն խախտվում աշխատողների պատշաճ փոխհատուցման իրավունքները:

3.3) Ըստ Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշման՝ վիճարկվող օրենքներով սահմանված կարգավորումների ուժով ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողներին դրամական փոխհատուցման տրման սահմանված առանձնահատկությունների հարցին անդրադառնալիս հարկ է բացահայտել աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր և հատուկ կարգավորումները՝ նշված հարաբերությունների համատեքստում:

ԼՂՀ աշխատանքային օրենսգիրքը կարգավորում է կողեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Օրենսդիրը ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների հաշվառմամբ, թույլատրելի է համարել ավելի

վաղ ընդունված «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքում առանձնահատուկ կարգավորման առկայությունը, և նմանատիպ կարգավորում նախատեսել նաև ավելի ուշ ընդունված «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքում:

«Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ հանրային ծառայությունը պետությանն Արցախի Հանրապետության սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Արցախի Հանրապետության քննչական կոմիտեում ծառայությունը, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայություններ:

Վատարված ուսումնասիրությունները փաստում են, որ պետական ծառայությունների առանձին տեսակների հետ կապված հարաբերությունները սահմանող օրենքներից՝ ազգային անվտանգության մարմիններում, ոստիկանությունում, փրկարարական և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների մասին օրենքները ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողներին մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար նախատեսում են դրամական փոխհատուցման տրամադրում նրա՝ չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար:

Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք, ինչը ենթադրում է նաև Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքի սկզբունքի պահպանմամբ աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու իրավունք:

Աշխատանքային օրենսդրությամբ ևս խտրականությունն արգելվում է (ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 3.1-ին հոդված):

Սակայն խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից: Խտրականության բացառումը իրենից ենթադրում է, որ նմանատիպ իրավիճակներում գտնվող անձինք պետք է ստանան հավասար վերաբերմունք, առանձին հանգամանքների պատճառով չպետք է արժանանան նվազ վերաբերմունքի՝ օրենսդրորեն չսահմանելով նման տարբերակված մոտեցման որևէ օբյեկտիվ և ողջամիտ պատճառ:

Վերոգրյալի վերաբերյալ կարևորվում է ԸԻԴ/0445/02/21 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի դիրքորոշումը՝ «... Սահմանադրությամբ երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու

առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են»:

Օրենսդրության համակարգային վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ վերոթվարկյալ ծառայությունների համար ընդհանուր և ընդգծված հատկանիշը դրանց օրենսդրությամբ սահմանված դեպքերում և ծավալով առնչությունն է զինվորական ծառայությանը:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ԼՂ օրենքի 6-րդ բաժինը սահմանում է զինծառայողների դրամական ապահովությունը և սոցիալական ապահովությունը: Նշված օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով՝ զինծառայողներ են համարվում Արցախի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքում զինծառայողների հետ հավասարեցված անձինք են Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարողները:

Բացի նշվածից, քննարկվող ծառայություններն առնչվում են զինվորական ծառայությանը օրենքով սահմանված մի շարք այլ դեպքերում ևս՝ պաշտոնների և կոչումների համապատասխանություն, ծառայության հետագա շարունակում տեղափոխվելու դեպքում, ինչպես նաև «Զենքի մասին» ԼՂ օրենքով սահմանված մարտական զենքի կիրառում: Վերոգրյալի համատեքստում առաջանում է զինվորական և քննարկվող ծառայություններում ծառայողների իրավական և սոցիալական վիճակի միևնույն օրենսդրական երաշխիքների ամրագրման անհրաժեշտություն:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ԼՂ օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան դատական կարգով ծառայությունից արձակվելու հրամանն անվավեր ճանաչվելու դեպքում հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար վճարման առանձնահատկություններ սահմանված չեն:

Խախտված աշխատանքային իրավունքների վերականգնման և պաշտպանության շրջանակներում աշխատողի օգտին գործատուից գանձվող միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնման ԼՂ աշխատանքային օրենսգրքով սահմանված իրավունքի պաշտպանության եղանակի դրսևորում է, որի արդյունքում առանց օրինական հիմքերի աշխատանքից ազատված աշխատողն ապօրինաբար հարկադիր պարապուրդում գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար ստանում է այն աշխատավարձը, որը նա կստանար, եթե չլիներ առանց օրինական հիմքերի աշխատանքից ազատված կամ խախտված չլիներ նրա աշխատանքային իրավունքները: Նշված չափով գործատուից գանձվող միջին աշխատավարձը չի կարող դիտարկվել որպես խախտված իրավունքի դիմաց փոխհատուցում կամ այլ հատուցում:

Այս համատեքստում առաջ է գալիս այն ելակետային դրույթը, որ օրենսդիրը որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության եղանակ նախատեսում է միայն մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը՝ լրիվ ծավալով:

Վերոգրյալի հիման վրա վիճարկվող իրավադրույթների էությունը և բովանդակային նշանակությունը բացահայտվում են նույն կերպ՝ քննարկվող ծառայություններից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողներին մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվող դրամական փոխհատուցումը նրա՝ չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար, ըստ էության պետք է լինի մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնում, ուստի չի կարող օրենսդրի կամքով լինել մասնակի և ոչ ամբողջական:



Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջև բոլորի հավասարության և 29-րդ հոդվածով ամրագրված՝ խտրականության արգելքի սկզբունքների լույսի ներքո դիտարկելով հանրային ծառայությունների առանձին տեսակները կարգավորող օրենքներով խախտված իրավունքների վերականգնման համար ծառայողների՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնման առանձնահատուկ կարգավորումները՝ վիճարկվող իրավադրույթները հանգեցնում են այդ ծառայություններում ծառայողների նկատմամբ տարբերակված մոտեցման դրսևորման, որի օբյեկտիվ, իրավաչափ և ողջամիտ հիմքեր սույն դիրքորոշման շրջանակներում չեն արձանագրվել:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումների համաձայն՝ աշխատավարձը անձի վաստակած միջոցն է, նրա սեփականությունը (ՄԴՈ-649), իսկ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք (ՄԴՈ-741):

Ամփոփելով վերը շարադրվածը, հիմք ընդունելով Գերագույն դատարանի վկայակոչված որոշումը, դիրքորոշման հեղինակը հանգել է այն հետևության, որ ծառայություններից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողներին մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրամադրվող դրամական հատուցման չափը հակասում է օրենսդրությամբ նախատեսված՝ մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջին, ուստի վիճարկվող իրավադրույթները հանգեցնում են չհիմնավորված և օբյեկտիվորեն չարդարացված տարբերակված մոտեցման դրսևորումների, խախտում ծառայողների սեփականության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքները:

#### **Գործի շրջանակներում պարզման ենթակա հարցերը**

Սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավանորմերի սահմանադրականությունը գնահատելիս Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, պարզել.

1) ի՞նչ իրավական կարգավիճակ ունեն ազգային անվտանգության մարմինների, արտակարգ իրավիճակների պետական ծառայության և ոստիկանության ծառայողները,

2) ինչպիսի՞ կառուցակարգեր են նախատեսված «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով,

3) հակասու՞մ են արդյոք նշված կարգավորումները Սահմանադրության 10-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին:

#### **4. Գերագույն դատարանի իրավական դիրքորոշումը**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության վերացական հսկողության շրջանակներում Գերագույն դատարանի խնդիրը ոչ թե գործի հանգամանքներին գնահատական տալն է, այլ տվյալ իրավական ակտի և այն ընդունելու գործողության սահմանադրականության որոշումը:

5.1 Գերագույն դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր

հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

«Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն.

1. Հանրային ծառայությունը պետությանը Արցախի Հանրապետության սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

2. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

3. Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Արցախի Հանրապետության քննչական կոմիտեում ծառայությունը, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայություններ:

(...):

Նշվածից բխում է, որ ազգային անվտանգության մարմինների, արտակարգ իրավիճակների պետական ծառայության և ոստիկանության համակարգերում (ինչպես նաև՝ պաշտպանության և հարկային մարմիններում) ծառայությունը հանդիսանում է հանրային ծառայության տարատեսակ՝ պետական հատուկ ծառայություն, որն ուղղված է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանն այն լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են Մահմանադրությամբ և օրենքներով:

Այնուհանդերձ, Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ պետական հատուկ ծառայություններից յուրաքանչյուրը, պայմանավորված իր առջև դրված խնդիրներով, դրանք իրականացնելու սկզբունքների և իրավազորությունների շրջանակով, ծառայության ընդունվելու, ծառայությունից ազատվելու ընթացակարգերի կարգավորման, պետության կողմից տրամադրվող սոցիալական երաշխիքների ծավալի և այլ առումներով, ունի իր առանձնահատկությունները: Այսպես՝

«Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը ներքին գործերի պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական կառավարման մարմին) համակարգում գործող մարմին է, որն իրականացնում է արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության գործառույթներ, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանության, ինչպես նաև փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման, զենքի, չպայթած զինամթերքի և ռազմամթերքի հայտնաբերման, փոխադրման և վնասազերծման (ոչնչացման) և այլ աշխատանքներ:

Նույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված են ծառայության հիմնական խնդիրները, այն է՝

ա) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ մարդկանց կյանքի ու առողջության փրկումը, պահպանումը.

բ) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացումը.

գ) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և զենքի, չպայթած զինամթերքի և ռազմամթերքի հայտնաբերման, փոխադրման և վնասագերծման (ոչնչացման) աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

դ) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգումը, վերահսկումը և այդ հարցերով իրազեկման ապահովումը.

ե) արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակումն ու դրանց կատարման ապահովումը.

զ) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծումը և կուտակումը, դրանց նպատակային օգտագործման ապահովումը.

է) բնակչության ուսուցման կազմակերպումը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով.

ը) պետական հակահրդեհային ծառայության մատուցումը և պետական հրդեհային հսկողության իրականացումը.

թ) արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և արտակարգ իրավիճակների կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

ժ) «Պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունում ծառայությունը (այսուհետ՝ փրկարարական ծառայություն) պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են նույն օրենքով:

«Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն.

«1. Փրկարարական ծառայության ծառայող է համարվում Արցախի Հանրապետության այն քաղաքացին, որն զբաղեցնում է սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված որևէ խմբի պաշտոն և ունի սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կոչում ու սովել է երդում կամ սույն օրենքով սահմանված կարգով գտնվում է կադրերի ռեզերվում:

2. Փրկարարական ծառայության ծառայողը (այսուհետ նաև՝ ծառայող) պետական ծառայող է»:

Նույն օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով սահմանված է նաև փրկարար ծառայության ծառայողի ատեստավորման և վերապատրաստման (որակավորման) կարգը:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանությունում ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են նույն օրենքով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոստիկանությունում ծառայողի զինվորական հաշվառումն իրականացնում է ոստիկանությունը՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայող է համարվում Արցախի Հանրապետության այն քաղաքացին, ով ծառայում է ոստիկանությունում, տվել է ոստիկանության ծառայողի երդում, զբաղեցնում է նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված որևէ խմբի պաշտոն և ունի ոստիկանության կամ զինվորական կոչում կամ սույն օրենքով սահմանված կարգով գտնվում է ոստիկանության կադրերի ռեզերվում կամ կադրերի գործող ռեզերվում: Ոստիկանության ծառայող են համարվում նաև Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություն Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից գործողված առկա ուսուցման ձևով սովորող Արցախի Հանրապետության քաղաքացիները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողը պետական ծառայող է:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված է ոստիկանության ծառայողի ատեստավորման և վերապատրաստման կարգը:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) զինվորական ծառայություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են նույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ազգային անվտանգության մարմիններում շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների զինվորական ծառայության անցնելու կարգը սահմանվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության օրենքով:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինների ծառայող է համարվում Արցախի Հանրապետության այն քաղաքացին, ով տվել է ազգային անվտանգության մարմինների ծառայողի երդում և զբաղեցնում է նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված որևէ խմբի պաշտոն կամ նույն օրենքով սահմանված կարգով գտնվում է կադրերի տրամադրության տակ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողը պետական ծառայող է:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված է ծառայողի ատեստավորման կարգը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական ծառայությունն Արցախի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության հատուկ տեսակ է: Արցախի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում նույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով զինծառայողներ են համարվում Արցախի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ զինծառայողներին հավասարեցված անձինք

են նաև Արցախի Հանրապետության փրկարարական ծառայության ծառայողները, որոնց վրա տարածվում են նույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի (բժշկական օգնություն տրամադրելը) և 65-րդ հոդվածի 1-ին մասի (ծառայողական բնակարանով ապահովելը) դրույթները:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ օրենքի՝ «Զինծառայողների դրամական ապահովությունը և սոցիալական ապահովությունը» վերնագրով 6-րդ բաժինն ընդգրկում է կարգավորումներ հետևյալ ոլորտներում՝

ա) զինծառայողների դրամական, պարենային, իրային, բնակարանային, տրանսպորտային ապահովության,

բ) զինծառայողներին տրվող դրամական օգնությունների,

գ) զինծառայողների բժշկական օգնության և սպասարկման,

դ) զինծառայողների՝ կրթություն ստանալու երաշխիքների,

ե) զինծառայողներին տրվող դրամական աջակցության,

զ) զինվորական ծառայության ժամանակ գոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության հետ կապված ծախսերի հատուցման,

է) զինծառայողների կենսաթոշակային ապահովության, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, առանձին կատեգորիաների անձանց ընտանիքների անդամների ամենամսյա պարգևավճարի իրավունքի,

ը) զինծառայողների լրացուցիչ երաշխիքների:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի դրույթներն ազգային անվտանգության մարմինների զինծառայողների վրա տարածվում են «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով չկարգավորված մասերով:

Գերագույն դատարանը, հիմք ընդունելով հատուկ ծառայությունների վերաբերյալ վերը բերված ոլորտային օրենքների կարգավորումները, ընդգծում է, որ ազգային անվտանգության մարմինների, արտակարգ իրավիճակների պետական ծառայության և ոստիկանության ծառայողներն իրենց կարգավիճակով, ինչպես նաև ծառայության ընդունվելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատվելու, ատեստավորման և վերապատրաստման վերաբերյալ և մի շարք այլ կառուցակարգերի շրջանակներում ունեն համարժեք կարգավորում, սակայն տարբերվում են զինծառայողներից: Ավելին, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ հոդվածը նշված հատուկ ծառայությունների ծառայողներին զինծառայող է համարում միայն որոշակի երաշխիքների տրամադրման մասով: Ինչ վերաբերում է ծառայությունից անհիմն ազատվելու կապակցությամբ նախատեսված կարգավորումներին, ապա դրանք ընդհանրապես զինվորական ծառայությունը կանոնակարգող հատուկ օրենքում նախատեսված չեն, և այդ կապակցությամբ զինծառայողների նկատմամբ կիրառելի են ԼՂՀ աշխատանքային օրենսդրության նորմերը:

Այսինքն, ազգային անվտանգության մարմինների, արտակարգ իրավիճակների պետական ծառայության և ոստիկանության ծառայողներն ունեն համադրելի իրավական կարգավիճակ, իսկ պաշտպանության բնագավառի ծառայողները վերջիններիս հետ համադրելի չեն:

5.2 Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային

հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են:

Աշխատանքի ազատ ընտրության իրավունքին համապատասխանում է իրավունքի մյուս սուբյեկտների պարտականությունը՝ վարձու աշխատանքի կազմակերպման, կիրառման և պաշտպանության ապահովման ուղղությամբ:

«Հայաստանի Հանրապետության 2004 թվականի աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի ուժով՝ 2005թ. հուլիսի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ է դրվել 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը (դրա հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ), այն վերանվանելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք»-ի:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն. «1. Սույն օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

2. Աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով»:

Նույն օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով:

Այսինքն, աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով, այլ նաև այլ իրավական ակտերով: Ընդ որում, աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող նորմերը մի կողմից սահմանում են աշխատողների ու գործատուների աշխատանքային փոխհարաբերությունները, մյուս կողմից ապահովում են նրանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը ինչպես միմյանց, այնպես էլ այլ անձանց ապօրինի գործողություններից:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն.

«1. Աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

(...):

3. Աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝

(...).

2) մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով.

(...).

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ գործատուի իրավական ակտն անվավեր ճանաչելով.

(...).

8) վնասի հատուցում ստանալով.

(...):»:

Հարկ է նշել նաև, որ միջազգային իրավական փաստաթղթերով և սահմանված են աշխատանքային իրավունքների պաշտպանության բնագավառում առանցքային կարգավորումներ: Այսպես.

1) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության իրավունք,

2) Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքը իր ապրուստի համար աշխատանքով վաստակելու հնարավորություն ստանալը, որը նա ազատորեն ընտրում է կամ որին նա ազատորեն համաձայնում է, և կձեռնարկեն հարկ եղած քայլեր այդ իրավունքի ապահովման համար»,

3) Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին մասի համաձայն՝ կողմերը, որպես իրենց քաղաքականության նպատակ, պարտավորվում են արդյունավետ իրականացման համար նպաստել նաև, որ յուրաքանչյուր ոք ունենա վաստակելու հնարավորություն՝ իր կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով,

4) Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որոշակի աշխատանքի հետ կապված ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որը հիմնված է այդ աշխատանքին հատուկ պահանջների վրա, խտրականություն չի համարվում:

Գերագույն դատարանը փաստում է, որ այս միջազգային չափորոշիչները *mutatis mutandis* պետք է կիրառելի լինեն նաև հանրային ծառայության ոլորտում, քանի որ իրենց էությանը տարածելի են նաև հանրային իրավահարաբերությունների շրջանակներում հանրային-իշխանական գործառույթներ իրականացնող անձանց վրա:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ աշխատանքից ապօրինի հիմքով ազատված (ծառայությունից ապօրինի արձակված) անձն ունի լեզիտիմ ակնկալիք՝ իր խախտված իրավունքների վերականգնմանը հասնելու առումով: Վերջինս հանդես է գալիս որպես խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարր և ենթադրում է այն բացասական հետևանքների վերացումը, որոնք անձի համար առաջացել են իրավունքի խախտման արդյունքում: Որպես կանոն, այդ բացասական հետևանքների վերացումը տեղի է ունենում մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնմամբ: Վերջինս նշանակում է, որ ծառայողը (աշխատողը) պետք է վերականգնվի այն նույն կարգավիճակում, որում գտնվել է նախքան ծառայությունից ազատվելը: Նշվածը վերաբերում է նաև նրան հասանելիք վարձատրությանը, քանի որ աշխատանքի իրավունքի իրացման հիմնական նպատակը վարձատրություն ստանալն է, ուստի աշխատանքում վերականգնվելու հարցում անձի ունեցած անհատական շահն ունի տնտեսական, ֆինանսական արժեք, որն իր հերթին կարգավորված է համապատասխան օրենսդրությամբ:

Սակայն, առանձին դեպքերում, մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը կարող է օբյեկտիվորեն անհնարին լինել: Այս դեպքում որպես խախտման բացասական հետևանքները վերացնելու իրավական միջոց է ծառայում անձի կրած վնասի դիմաց տրվող փոխհատուցումը:

Այս համատեքստում Գերագույն դատարանն արձանագրում է, որ օրինական ակնկալիքի մեջ չի կարող ներառվել ծառայությունից (աշխատանքից) անհիմն ազատված լինելու ժամանակահատվածի համար չստացած վարձատրությունը (աշխատավարձը): Վերջինս, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով,

իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է, իսկ հարկադիր պարապուրդի մատնված աշխատողն այդ ժամանակահատվածի համար որևէ աշխատանք փաստացի չի կատարում: Այս նկատառումից ելնելով՝ օրենսդիրը սահմանել է նաև այնպիսի կառուցակարգ, որը երաշխավորում է ծառայությունից (աշխատանքից) անհիմն ազատված ծառայողի համար իր չստացած վարձատրության փոխարեն ստանալ համապատասխան հատուցում: Վերջինս ստանալու իրավունքը նախատեսված է և աշխատանքային օրենսդրությամբ, և սույն վարույթով վիճարկվող իրավանորմերով:

Այսպես, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Ինչ վերաբերում է սույն վարույթի շրջանակներում վիճարկված իրավանորմերին, ապա դրանք կիրառելի են միայն ծառայողին ծառայության մեջ վերականգնելու պարագայում և նախատեսում են մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար դրամական փոխհատուցման վճարում, նրա՝ չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար:

Այն ծառայողներին, ովքեր արձակման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ փոխհատուցումը վճարվում է նրանց՝ զբաղեցրած վերջին պաշտոնի աշխատավարձի և ծառայությունից արձակված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության չափով, բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար:

Այսինքն, աշխատանքային իրավահարաբերությունները և պետական հատուկ ծառայության՝ սույն վարույթի շրջանակներում քննարկվող իրավանորմերը ծառայությունում (աշխատանքում) վերականգնվելու դեպքում ստանալիք հատուցման (փոխհատուցման) հարցում ցուցաբերում են տարբերակված մոտեցում:

5.3 Սահմանադրության՝ «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:



Սահմանադրության՝ «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր որ ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Սահմանադրության նշված հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական հետևյալ սկզբունքները.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ, բողոքարկման ժամկետ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները,

- դատական ակտի պատճառաբանվածությունը, ըստ որի ընդունվում կամ մերժվում է անձի դիմումը, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման իրավունքը մատչելիության իրավունքի իրացման երաշխիքներ են,

- օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, արդյունքում չապահովելով դատարանի մատչելիության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, բացահայտելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը, ընդգծել է, որ դատավարության մասնակիցները պետք է ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները (BĚLEŠ AND OTHERS V. THE CZECH REPUBLIC, Application no. 47273/99, 12.11.2002), իսկ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր համարվող դատարանի մատչելիության իրավական սկզբունքի խախտում կարող է առկա լինել, երբ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվի այնչափ, որ սահմանափակվի անձի դատական պաշտպանությունից գործնականում օգտվելու իրավունքը (Sialkowska v. Poland, Application no. 8932/05, 22.03.2007):

Նշվածներից բխում է, որ արդար դատաքննության իրավունքը կարող է սահմանվել որպես մարդու դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելուն ուղղված միջազգային և ներպետական նորմերով ամրագրված և երաշխավորվող սուբյեկտիվ դատավարական իրավունքների համակցություն, որը յուրաքանչյուրին ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան առանց խոչընդոտի դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում իրականացվելը, ապահովում է հիմնավորված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է դատական պաշտպանության

իրավունքի խախտմանը հանգեցնող արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ իրավունքի խախտման վերացման հնարավորությունը:

Անձն իր դատական պաշտպանության հիմնարար իրավունքը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կարգով: Դատարան դիմելն անձի իրավունքն է, որի իրացումն օրենքով նախատեսված իրավական գործընթաց է, պայմանավորված չէ դատական կամ հանրային իշխանության այլ մարմնի հայեցողությամբ, և որի իրացմամբ առաջացած իրավական հետևանքները պարտադիր են ինչպես դիմող անձի, դատավարության մյուս մասնակիցների, այնպես էլ դատարանի համար: Դատավարության ընթացքում դատարանը պարտավոր է կայացնել պատճառաբանված, հիմնավորված դատական ակտեր, որոնք պարտադիր են դատավարության մասնակիցների համար:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից կարևոր է նաև այն հանգամանքը, թե ինչպիսի իրավական պայմաններ են առաջադրված դատարան դիմելու իրավունքն իրացնելու, հետևաբար նաև դրանով պայմանավորված՝ դատավարական կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, վերականգնելու համար:

Սույն վարույթի շրջանակում վկայակոչված քաղաքացիական գործերը գտնվում են ԱՀ վերաքննիչ դատարանի վարությամբ, այսինքն հայցվորները գրկված չեն եղել ոչ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան դիմելու, ոչ էլ դատական ակտը վերադաս աստիճանի բողոքարկելու հնարավորությունից: Ավելին, ԱՀ վերաքննիչ դատարանն իրագործելով իր իրավունքը դիմել է Գերագույն դատարան՝ սահմանադրականության հարց բարձրացնելով: ԱՀ վերաքննիչ դատարանի կողմից օրենսդրությամբ սահմանված հնարավորության իրագործումը, բնականաբար, գործով կողմերի արդար դատաքննության սահմանադրական իրավունքի խախտման հետ չունի որևէ աղերս, ուստի այս մասով դիմումի հիմնավորումը հերքվում է գործի նյութերով:

Վիճարկվող իրավանորմերն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի համատեքստում դիտարկելով՝ Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, ինչպես նաև իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական հետևյալ հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

Գերագույն դատարանը մի շարք որոշումներում (ԳԴՈ-17, ԳԴՈ-19, ԳԴՈ-21) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել, որ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացություններն ու կարգավորումները պետք է լինեն հստակ և որոշակի, չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության: Իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության սկզբունքներից մեկը, ենթադրում է, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների՝ այդ թվում իշխանություն կրողի, գործողությունները պետք է լինեն կանխատեսելի և իրավաչափ:

Վերահաստատելով իր դիրքորոշումը սույն որոշմամբ քննարկվող հարցերի համատեքստում՝ Գերագույն դատարանը շեշտում է, որ համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում պետք է ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի

հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտականությունների հարցում:

Իրավական որոշակիության սահմանումը տրված է Սահմանադրության 79-րդ հոդվածում, որի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Գերագույն դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրատ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Նման վիճակն իր հերթին հանգեցրել է նրան, որ վեճի առարկա իրավադրույթը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարող է խնդրահարույց դառնալ և չհամապատասխանել իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին, ինչպես նաև չապահովել իրավունքի էության անձեռնմխելիության սահմանադրաիրավական երաշխիքի իրացումը:

Իրավական որոշակիությունը, որպես կարևորագույն սկզբունք, պահանջում է նորմատիվ իրավական կարգավորման կայունություն՝ առնվազն տեսանելի ժամանակահատվածում: Միաժամանակ, իրավական որոշակիությունը պետք է բացառի միևնույն նորմատիվ իրավական ակտի տարբեր իրավադրույթների միջև կոլիզիաների և սխալ ընկալումների հնարավոր ձևավորումը՝ ոչ ստույգ իրավակարգավորման հետևանքով:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատվել է, որ «օրենքի որակը» ենթադրում է, որ ազգային օրենքը պետք է բավարար կերպով հասանելի լինի, հստակ և կիրառման մեջ կանխատեսելի՝ կամայականության բոլոր տեսակի ռիսկերից խուսափելու համար: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի սահմանած «օրինականության» չափանիշն այսպիսով պահանջում է, որ բոլոր օրենքները լինեն բավարար չափով հստակ, որպեսզի յուրաքանչյուր ոք (անհրաժեշտության դեպքում՝ այլ անձի արհեստավարժ օգնությամբ) հնարավորություն ունենա օբյեկտիվորեն կանխատեսելու համապատասխան գործողությունների հետևանքները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում նույնպես անդրադարձել է իրավական որոշակիության կարևորության խնդրին նշելով, որ «...նորմը չի կարող օրենք համարվել, եթե այն ձևակերպված չէ անհրաժեշտ հստակությամբ՝ «...օրենքը պետք է համապատասխանի որակական պահանջներին՝ հասանելի և կանխատեսելի լինի...»:

Վերլուծելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներն այս իրավական հարցի կապակցությամբ՝ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ ներպետական նորմատիվ իրավական ակտերը համարվում են եվրոպական կոնվենցիայի նպատակներին համապատասխանող օրենքներ, եթե համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին, հստակ են և ճշգրիտ ձևակերպված, նաև քաղաքացիների համար սոցիալական սպասելիքների առումով կանխատեսելի են:

Նշվածներն արտածելով սույն վարույթի շրջանակներում քննարկվող հարցի վրա Գերագույն դատարանն արձանագրում է, որ վիճելի իրավակարգավորումը բավականաչափ ճշգրիտ է և հստակ ձևակերպված,

ուստի հատուկ ծառայության անցնող յուրաքանչյուր ոչ ծառայությունից ազատվելուց հետո նախկին ծառայությունում վերականգնվելու պարագայում հարկադիր պարապուրդի դիմաց իրեն հասանելիք սոցիալական սպասելիքների առումով ունի կանխատեսելիության անհրաժեշտ մակարդակ:

Վիճելի իրավակարգավորումը դիտարկելով սեփականության անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքի շրջանակներում՝ Գերագույն դատարանը փաստում է, որ Սահմանադրության 10-րդ հոդվածի ուժով սահմանադիրը ոչ միայն ճանաչում է սեփականության իրավունքը, այլև շեշտադրում պետության պարտավորությունը՝ ապահովել տվյալ իրավունքի արդյունավետ պաշտպանությունը և երաշխավորել տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

Սահմանադրության 10-րդ հոդվածի տրամաբանությամբ Սահմանադրության 60-րդ հոդվածն ամրագրում է սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող այն իրավագործությունների ամբողջությունը, որոնք պատկանում են սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտիվ իրավունքի կրողի՝ այդպիսով ուրվագծելով խնդրո առարկա սահմանադրական իրավունքի իրականացման սահմանները:

Սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով սեփականատիրոջ հայեցողությունը: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը. վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն:

Պետք է արձանագրել, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի պաշտպանության առարկան սահմանափակվում է արդեն իսկ օրինական հիմքով ձեռք բերած սեփականության կամ այն ձեռք բերելու օրինական ակնկալիքի պաշտպանությամբ: Այս համատեքստում անօրինական կարգով ծառայությունից (աշխատանքից) ազատված և հետագայում նույն պաշտոնին վերականգնված ծառայողի (աշխատողի) համար որպես սեփականություն կարող է դիտարկվել ոչ թե չստացած աշխատավարձը (քանի որ հարկադիր պարապուրդի ընթացքում նա որևէ աշխատանք տվյալ գործատուի մոտ չի իրականացնում), այլ հարկադիր պարապուրդի դիմաց համարժեք հատուցումը (փոխհատուցումը):

Միաժամանակ, անվիճելի է, որ պետական ծառայությունը կարգավորող օրենսդրության իրավանդումները նախատեսել են նախկին պաշտոնում (ծառայության մեջ կամ աշխատանքում) վերականգնելու դեպքում փոխհատուցման վճարման հնարավորություն, ուստի սեփականության օրինական ակնկալիքի որևէ խախտման մասին խոսք կարող է լինել միայն այն պարագայում, երբ այդ կարգավորումը կհակասի Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներին:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Սահմանադրության 29-րդ հոդվածն ամրագրում է. «Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Գերագույն դատարանը գտնում է, որ խտրականությունն ընդհանուր իրավական տերմին է, որը նշանակում է պետության, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքների սահմանափակում կամ ռոնահարում՝ այդ կամ այլ պետությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց համեմատությամբ: Խտրականությունն իր բոլոր ձևերով արգելվում է ժողովրդավարական պետությունների ներքին, ինչպես նաև միջազգային իրավունքով: Վկայակոչված սահմանադրական նորմից հետևում է, որ Սահմանադրությունն արգելում է խտրականությունը:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 28-րդ հոդվածը հռչակում է օրենքի առջև բոլորի հավասարությունը:

Օրենքի առջև հավասարության և խտրականության բացառման սահմանադրական սկզբունքները բոլորի համար սահմանում են իրավունքների ու ազատությունների իրացման հավասար հնարավորություններ: Ուստի օրենքում խտրականության ցանկացած դրսևորում այն անխուսափելիորեն դարձնում է Սահմանադրությանը չհամապատասխանող: Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը դառնում է ցանկացած խտրականության վերացման պահանջ, ինչը ենթադրում է, որ օրենքում չեն կարող լինել որևէ տարբերության, բացառության կամ նախապատվության հնարավորություններ, որոնք հիմնված են անձնական որևէ հատկանիշի վրա, որովհետև այդպիսի մոտեցումը հանգեցնում է մարդու և քաղաքացու իրավական հնարավորությունների հավասարության վերացմանը կամ խախտմանը:

Օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական պահանջից բխում է, որ օրենքի կիրառման արդյունքում առաջացած իրավական նույնակարգ հետևանքները և ձևականորեն հավասար սուբյեկտների նկատմամբ օրենքի կիրառման միևնույն մոտեցումները պետք է հավասար լինեն յուրաքանչյուրի համար: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք՝ առանց որևէ հատկանիշի խտրականության, պետք է ստանա օրենքով սահմանված իրավունքների ու ազատությունների միևնույն ծավալը, ունենա այդ իրավունքների ու ազատությունների իրացման նույն հնարավորությունները, դրանց պաշտպանության և խախտման դեպքում՝ դրանք վերականգնելու նույն միջոցները:

Նշված նորմի բովանդակությունից բխում է հետևյալը.

ա/ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները,

բ/ խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից,

գ/ խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ:

Օրենքի առջև ընդհանուր հավասարության սահմանադրական սկզբունքը երաշխավորում է միևնույն խմբի (կատեգորիայի) սուբյեկտների նկատմամբ հավասար իրավունքների և պարտականությունների օրենսդրական ամրագրում և չի բացառում օբյեկտիվ հիմքերով առանձնացված զանազան խմբերին (կատեգորիաներին) պատկանող անձանց նկատմամբ տարբերվող վերաբերմունքի ամրագրումը: Հիշյալ սահմանադրական սկզբունքը կարող է խաթարվել միայն հավասար իրավական կարգավիճակ ունեցող և հավասար իրավական դաշտում գործող սուբյեկտների նկատմամբ իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում տարբերակված մոտեցում ցուցաբերելու դեպքում, որը կարտահայտվի նրանցից մեկին կամ մի քանիսին որևէ ողջամիտ իրավական հիմնավորում չունեցող արտոնության կամ բարենպաստ վերաբերմունքի տրամադրմամբ:

Կոնվենցիայի՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով սահմանվում է, որ Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի միջև:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, իր վճիռներից մեկում (*Andrejeva v. Latvia*, GC 18.02.2009, 55707/00, § 81) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. «...տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է նաև, որ «ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների իրականացման դեպքում խտրականության չենթարկվելու իրավունքը խախտվում է նաև այն դեպքերում, երբ պետությունը չի ցուցաբերում տարբերակված վերաբերմունք զգալիորեն տարբեր իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ» (*Thlimmenos v. Greece*, 06.04.2000, 34369/97 § 44):

Հավասարության ապահովումը երաշխավորում է պաշտպանություն խտրականության ցանկացած դրսևորումից և միաժամանակ արգելում է միևնույն խմբին պատկանող անձանց իրավունքների նկատմամբ կիրառել ոչ օբյեկտիվ տարբերություններ:

Սույն որոշման 5.1 կետում բերված վերլուծություններից ակնհայտ է, որ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի և սույն վարույթի շրջանակներում վիճարկվող օրենքների կարգավորումները վերաբերում են տարբեր իրավական կարգավիճակներ ունեցող անձանց և համադրելի չեն, հետևաբար պետությունը, սոցիալական և հատուկ պետական ծառայության քաղաքականության ոլորտում ունենալով թույլատրելի լիազորություն, իրացրել է այն՝ վիճարկվող կարգավորմամբ դրսևորելով տարբերակված մոտեցում, այն է՝ տարբեր խմբի անձանց համար սահմանելով պետական

ծառայության պաշտոնում վերականգնվելու դեպքում փոխհատուցում ստանալու տարբեր պայմաններ:

Գերագույն դատարանը փաստում է, որ վիճարկվող բառակապակցությունը բխում է պետական ծառայությունում հանրային և մասնավոր շահերի ճիշտ հավասարակշռման անհրաժեշտությունից, նաև կոչված է ապահովելու հանրային ծառայության տարբեր ոլորտների առանձնահատկությունների և ծառայողական խնդիրների հաշվառմամբ կայունության սկզբունքի իրագործումը: Ըստ այդմ, վիճելի կարգավորումը պայմանավորված է արտակարգ իրավիճակների պետական ծառայության, ազգային անվտանգության մարմիններում և ոստիկանությունում ծառայության սահմանված գործառնությունների համակարգով և բնույթով, հետևաբար, ունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում և քննարկված օրենքների կարգավորման շրջանակներում խտրականություն համարվել չի կարող:

Վերոնշյալ իրավական վերլուծությունների արդյունքում Գերագույն դատարանը գտնում է, որ «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի և «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

Ինչ վերաբերում է պատասխանողի այն դիրքորոշմանը, թե քննարկվող ծառայությունների և զինվորական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքների միատեսակ մոտեցումը կլինի արդարացված, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական վերլուծություններն ու դրանց վերջնարդյունքում կատարված եզրահանգումները որևէ կերպ չեն խոչընդոտում օրենսդիր մարմնին սույն վարույթով վիճարկված իրավանդման փոփոխություն նախաձեռնելու հարցում:

Ելնելով գործի քննության արդյունքներից, հիմք ընդունելով Սահմանադրության 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 142-րդ հոդվածի 4-րդ մասը, 143-րդ հոդվածը և ղեկավարվելով «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 49-52-րդ, 59-րդ հոդվածներով և 56-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով՝ Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի և «Ոստիկանությունում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» դրույթը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

2. Սահմանադրության 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ն.ՆԱԲԻՄԱՆՅԱՆ**

**25-ին մայիսի 2022 թվականի  
ԳՂՈ-26**

ԱՐՅԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ԳՂՈ-26 գործով  
դատավոր Արթուր Աբրահամյան

ք.Ստեփանակերտ

25-ին մայիսի 2022 թվական

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի դատավոր՝ Արթուր Աբրահամյան, մասնակցելով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի դիմումների հիման վրա՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով Արցախի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության վերաբերյալ գործի քննությանը, համաձայն չլինելով Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի դատավորների մեծամասնությամբ ընդունած որոշման եզրափակիչ և պատճառաբանական մասերի հետ, ղեկավարվելով «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով և ԱՀ Գերագույն դատարանի սահմանադրական արդարադատություն իրականացնելու կանոնակարգի 41-րդ հոդվածով՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք:

Այսպես խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան: Դատարան դիմելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա:

Արդար դատաքննության իրավունքը կարող է սահմանվել որպես մարդու դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելուն ուղղված միջազգային և ներպետական նորմերով ամրագրված և երաշխավորվող սուբյեկտիվ դատավարական իրավունքների համակցություն, որը յուրաքանչյուրին ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան առանց խոչընդոտի դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում իրականացվելը, ապահովում է հիմնավորված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքի խախտմանը հանգեցնող արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ իրավունքի խախտման վերացման հնարավորությունը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդար և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է մարդու կարևորագույն իրավունքներից մեկի՝ արդար դատական քննության իրավունքի



իրականացման երաշխիքները՝ յուրաքանչյուր մարդու համար երաշխավորելով արդար դատական քննության իրավունքը: Անձն իր դատական պաշտպանության հիմնարար իրավունքը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կարգով: Դատարան դիմելն անձի իրավունքն է, որի իրացումն օրենքով նախատեսված իրավական գործընթաց է, պայմանավորված չէ դատական կամ հանրային իշխանության այլ մարմնի հայեցողությամբ, և որի իրացմամբ առաջացած իրավական հետևանքները պարտադիր են ինչպես դիմող անձի, դատավարության մյուս մասնակիցների, այնպես էլ դատարանի համար: Դատավարության ընթացքում դատարանը պարտավոր է կայացնել պատճառաբանված, հիմնավորված դատական ակտեր, որոնք պարտադիր են դատավարության մասնակիցների համար:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից կարևոր է նաև այն հանգամանքը, թե ինչպիսի՞ իրավական պայմաններ են առաջադրված դատարան դիմելու իրավունքն իրացնելու, հետևաբար, նաև դրանով պայմանավորված՝ դատավարական կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, վերականգնելու համար:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի /այսուհետ՝ նաև ՍՕ/ 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:

ՍՕ 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Գտնում եմ, որ նշված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում պետք է արձանագրել, որ վերոնշյալ հոդվածները, սահմանելով ՍՕ գործողության ոլորտները, դրա մեջ ներառել են նաև քաղաքացիական և պետական ծառայության հետ կապված իրավահարաբերությունները: Այսինքն՝ նշված ծառայությունների հետ կապված իրավահարաբերությունները դուրս չեն աշխատանքային օրենսդրության կարգավորման շրջանակներից: ՍՕ նորմերի կիրառումը հանրային ծառայության, որի թվում է նաև ազգային անվտանգության մարմնում, ոստիկանությունում և արտակարգ իրավիճակների պետական ծառայությունում ծառայությունը, նկատմամբ ամբողջական չէ, և հանրային ծառայությունը և դրա տեսակները կարգավորող օրենքներով այլ բան նախատեսված լինելու դեպքերում կիրառվում են այդ իրավական ակտերով նախատեսված կանոնակարգումները: ՍՕ 7-րդ հոդվածի տրամաբանության լույսի ներքո աշխատանքային օրենսգրքի դրույթները հանրային ծառայության ոլորտում կիրառվում են ոչ թե սուբսիդիարության (լրացուցիչ) սկզբունքով, այլ հակառակը՝ դրանք նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի ուժով ներառված են աշխատանքային օրենսդրության կարգավորման ոլորտում, և այդ հարցերի վերաբերյալ հանրային ծառայության օրենսդրության նորմերը պետք է կիրառվեն սուբսիդիարության (լրացուցիչ) կարգով՝ աշխատանքային հարաբերությունների ոլորտում դրանց միասնական և տարբերակված կարգավորման սկզբունքների հիման վրա: Ավելին, նշված օրենսդրական վերոնշյալ կանոնակարգումը չպետք է դիտարկվի և մեկնաբանվի որպես հանրային ծառայության հետ կապված բոլոր

իրավահարաբերությունների ներառում հանրային իրավունքի կարգավորման ոլորտում, քանի որ գործող օրենսդրական կանոնակարգումների ընդհանուր տրամաբանության համատեքստում հանրային ծառայության հետ կապված իրավահարաբերություններն ունեն աշխատանքային բնույթ, սակայն հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները՝ օրենսդիրն այլ իրավական կարգավորումների նախատեսման հնարավորություն է ընձեռել: Այդ հանգամանքը պայմանավորված է մի կողմից հանրային ծառայության առանձնահատկություններով, հանրային ծառայության մեջ ներգրավված ծառայողների կարգավիճակի առանձնահատկություններով, մյուս կողմից՝ դրա բազմաբնույթ և բազմաֆունկցիոնալ նշանակությամբ, և հետևաբար՝ հանրային ծառայության տարբեր տեսակների գործառնության հատկանիշներով, որոնք իրենց ազդեցությունն են ունենում նաև դրանց աշխատանքային իրավակարգավորման վրա: Արդյունքում գործող օրենսդրական զարգացումները նման իրավահարաբերությունները դարձրել են որոշակիորեն երկակի իրավակարգավորման ազդեցություն ունեցող օբյեկտ, և վերջինս կարելի է դիտարկել որպես աշխատանքային իրավունք հանրային իրավունքի ոլորտում:

Այլ կերպ ասած, հանրային ծառայողի գործունեության հետ կապված հարցերը, որոնք կրում են աշխատանքային բնույթ, դրանց իրավակարգավորման հիմքը ՍՕ և հանրային ծառայության վերաբերյալ օրենքների համապատասխան դրույթներն են: Հետևաբար, դրանք պետք է դիտարկվեն միասնության մեջ՝ որպես մեկ իրավակարգավորում:

ՍՕ 265-րդ հոդվածը, որը կարգավորում է աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերը, սահմանում է նաև, որ եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում են, որ ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողներին չվճարված աշխատավարձի չափով կամ զբաղեցրած վերջին պաշտոնի աշխատավարձի և ծառայությունից արձակված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության չափով դրամական փոխհատուցում տալու երաշխիք սահմանող «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածը, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածը, «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածը, իսկ ՍՕ 265-րդ հոդվածով սահմանված հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի չստացված աշխատավարձը, կամ նվազ վարձատրվող

աշխատանք կատարելու ժամանակահատվածի համար աշխատավարձի տարբերությունը վճարելու վերաբերյալ նորմը սույն գործով չի կարող կիրառելի լինել, քանի որ՝ այդ հարցն արդեն իսկ իր կարգավորումն է ստացել «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ և «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասերով:

Կարելի է արձանագրել նաև, որ ԱՕ 265-րդ հոդվածով սահմանված վերը վկայակոչյալ երաշխիքը կոչված է փոխհատուցելու առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխելու, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողի կորցրած, չստացած եկամուտները այն չափով, ինչ չափով նա ձեռք կբերեր դա, եթե նրա իրավունքը նման կերպ չխախտվեր: Այդ նորմը կիրառելի է աշխատանքային իրավունքներ ունեցող և պարտականություններ կրող յուրաքանչյուր աշխատողի նկատմամբ, ում աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով: Այլ կերպ ասած, նշված նորմը սահմանում է գործատուի պարտականությունը՝ փոխհատուցելու աշխատողի չստացված աշխատավարձը, բոլոր այն դեպքերում, երբ աշխատողն անօրինական կարգով զրկվել է աշխատելու և աշխատավարձ ստանալու հնարավորությունից, պայմանավորված՝ աշխատանքի պայմանները փոփոխելու, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու հանգամանքով, և Դատարանի լիազորությունը՝ զանձելու այդ գումարը:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը հատուկ սահմանված է այդ մարմիններում ծառայություն իրականացնող ծառայողների համար, և երաշխիք է սահմանում յուրաքանչյուր ծառայողի համար՝ ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված լինելու դեպքում մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար՝ տալ դրամական փոխհատուցում առավելագույնը երեք ամսվա համար՝ կա՛մ չվճարված աշխատավարձի ձևով, կա՛մ արձակված ծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի աշխատավարձի և ծառայությունից արձակված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության ձևով: Այսինքն՝ սույն նորմը ծառայողին հնարավորություն չի տալիս մինչև վերականգնումն ընկած՝ ժամանակահատվածի համար ամբողջությամբ ստանալ այն վաստակը՝ աշխատավարձը, որը նա կորցրել է անհիմն կամ անօրինական արձակվելու հիմքով, ինչպիսի հնարավորություն արդարացիորեն երաշխավորված է ԱՕ 265-րդ հոդվածով:

Նշված նորմերի համադրության արդյունքում պարզ է դառնում, որ թեև դրանք նույն հարաբերություններն են կարգավորում, սակայն «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 50-րդ հոդվածի, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասերի կիրառմամբ կարող է առաջանալ իրավիճակ, երբ օրինակ ծառայությունում վերականգնելու մասին վեճը քննելու և դատական ակտ կայացնելու ժամանակահատվածը տևի երեք ամսից ավելի, որի դեպքում ծառայողը կզրկվի ամբողջ ժամանակահատվածի համար կորցրած աշխատավարձը ստանալու հնարավորությունից:

Նշվածների հիման վրա կարելի է արձանագրել է, որ ԱՀ Սահմանադրության /այսուհետ՝ նաև Սահմանադրություն/ 61-րդ և 63-րդ հոդվածների համատեքստում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող նորմն իրավական իմաստով և տառացի մեկնաբանմամբ չեն երաշխավորում ծառայությունից անհիմն և անօրինական արձակվելու արդյունքում իրավունքի խախտման հետևանքով առաջացած բացասական հետևանքներն ամբողջությամբ վերացնելու, ծառայողի՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու՝ մինչև ծառայությունում վերականգնելու ամբողջ ժամանակահատվածի համար չստացված աշխատավարձը, որը նա կստանար, եթե նրա այդ իրավունքը չխախտվեր, ստանալու հնարավորությունը, այսինքն՝ հակասում է նշված հոդվածներին, այն դեպքում, երբ ԱՕ 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է նաև՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով, որը դատարանների կողմից չապահովելու արդյունքում կխախտվի ծառայողի՝ աշխատավարձը ստանալու իրավունքը և անհնարին կդառնան այդ իրավունքի պատշտպանությունն ու վերականգնումը:

Դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների իրագործման համար իրավունքների և ազատությունների վերականգնումը որոշակի կառուցակարգի և ընթացակարգերի հաստատման միջոցով պետության պարտականությունն է: Պետությունն է պարտավոր նաև ապահովել ստեղծված կառուցակարգի կողմից խախտումների արդյունավետորեն կանխումը և վերացումը: Երբ գործող օրենսդրությունն անհնարին է դարձնում անձանց հայցադիմումների հիման վրա դատական վերահսկողություն իրականացնել նրա աշխատանքային իրավունքների խախտման արդյունքում ծագած բոլոր բացասական հետևանքները վերացնելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու եղանակով անօրինական կարգով ծառայությունից արձակելու հետևանքով չստացված աշխատավարձը, սեփականությունը ձեռք բերելու հարցում, դա անհամատեղելի է իրավական պետության կողմից որդեգրված սկզբունքներին և մոտեցումներին:

Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը ոչ միայն նշանակում է, որ սեփականատերը որպես սուբյեկտիվ իրավունքների կրող, իրավասու է պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև ենթադրում է պետության պարտականությունը անձի սեփականությունը պաշտպանելու անօրինական գործողություններից: Պետության այս պարտականությունը խնդրո առարկա իրավիճակում պահանջում է ապահովել արդյունավետ կառուցակարգ անօրինական տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության և կրած վնասների վերականգման համար, ուստի «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասում, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասում և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված նորմերը՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում համաչափ և արդյունավետ միջոց չէ ծառայողի խախտված իրավունքները վերականգնելու ու անօրինական կարգով ծառայությունից արձակելու հետևանքով չստացված աշխատավարձը ստանալու համար: Նման իրավակարգավորմամբ լիարժեք հաշվի չեն առնվում արդար դատաքննության շրջանակներում տվյալ ծառայողի՝ իր չստացված

աշխատավարձը ապահովելու հնարավորությունը, լիարժեք չի երաշխավորվում անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը: Դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունն ու մատչելիությունը պայմանավորված է անձի իրավունքների, այդ թվում նաև՝ սեփականության իրավունքի պաշտպանության լիարժեք իրավական հնարավորությամբ:

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: 3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: 4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից՝ բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի»:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով....:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներով արձանագրել է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներով շեշտել է, որ «սեփականություն» հասկացությունը բովանդակում է ոչ միայն ֆիզիկական բարիքների սեփականությունը, այլև սեփականություն կարող են համարվել որոշ գույքային այլ իրավունքներ և շահեր, ինչպես նաև անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը:

ՀՀ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ աշխատավարձը՝ դա քաղաքացու վաստակած միջոցներ են և հանդիսանում են նրա սեփականությունը:

Նշվածների հիման վրա գտնում եմ, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը անհնարին են դարձնում ծառայողի հայցադիմումի հիման վրա նրա իրավունքների խախտման արդյունքում ծագած բոլոր բացասական հետևանքները վերացնելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու եղանակով անօրինական կարգով ծառայությունից արձակվելու հետևանքով չստացված և Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված աշխատավարձը՝ սեփականությունը, ձեռք բերելու հնարավորությունը: Մասնավորապես, թեև վիճարկվող նորմերով սահմանված է այնպիսի իրավական կառուցակարգ, որն առաջին հայացքից հանդես է գալիս որպես իրավունքի խախտմամբ կորցրած սեփականությունը վերականգնելու օրենսդրական երաշխիք, սակայն իրականում զրկում է աշխատողին իր չստացած աշխատավարձը՝ սեփականությունը, լրիվ ստանալու հնարավորությունից, ուստի «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասում և «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների

պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասում ու «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված նորմերը՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցությունների մասով, Սահմանադրության 60-րդ և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում համաչափ և արդյունավետ միջոց չէ ծառայողի խախտված իրավունքները վերականգնելու և անօրինական կարգով ծառայությունից արձակելու հետևանքով չստացված աշխատավարձը՝ սեփականությունը, ձեռք բերելու համար: Վիճարկվող նորմի իրավակարգավորումը չի բխում անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի էությունից ու բովանդակությունից: Հետևաբար՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքով և «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքով և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված կարգավորումներով խախտվում են Սահմանադրության 60-րդ և 63-րդ հոդվածների պահանջները, քանի որ նշված օրենքների նորմերով հնարավորություն չի տրված ծառայողին վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը և ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված լինելու դեպքում մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար ստանալ անհիմն կամ անօրինական եղանակով ծառայությունից արձակվելու հետևանքով ակնկալվող աշխատավարձը՝ որպես սեփականություն, հետևաբար, արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում են նաև Սահմանադրության 60-րդ հոդվածին: Մասնավորապես, ակնհայտորեն խախտվում է նշված մարմիններում ծառայող այն ծառայողների իրավունքները, որոնք ծառայության են ընդունվել դեռևս մինչև նշված օրենքների ընդունումը, քանի որ նախկին օրենսդրությամբ նման կարգավորում նախատեսված չէր:

Ավելին, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ԼՂՀ օրենքը նման կարգավորում չի նախատեսում, այն դեպքում, երբ վերը նշված օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն զինծառայողներ են համարվում Արցախի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ զինծառայողներին հավասարեցված անձինք են Արցախի Հանրապետության փրկարարական ծառայության ծառայողները, ինչը կարող է դիտարկվել նաև որպես խտրականության դրսևորում, քանի որ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները, իսկ տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին ու խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում,

մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ:

Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բոլորը հավասար են օրենքի առջև», իսկ ըստ Սահմանադրության 29-րդ հոդվածի՝ «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությունը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

ԱՕ 265-րդ հոդվածի 1-ին մասի և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ու «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համադրության արդյունքում գալիս եմ այն եզրահանգման, որ անհիմն կամ անօրինական կարգով ծառայությունից արձակված ծառայողի վերականգնման համար «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով տրվող դրամական հատուցման համար սահմանված ժամանակահատվածը սահմանափակ է՝ առավելագույնը երեք ամսով, իսկ ԱՕ 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է աշխատողի օգտին գործատուից գանձել նրա միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված համանման նորմեր են պարունակում նաև «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, մյուս՝ հարկային, հյուպատոսական, դատական, զինվորական մարմիններում ծառայությունը կանոնակարգող հատուկ օրենքներում նման դրույթ առկա չէ: Հետևաբար՝ նման ծառայողներին /աշխատողներին/ անօրինական կամ անհիմն ծառայությունից արձակելու դեպքում, նրանց չստացված աշխատավարձի դիմաց փոխհատուցման գումարը գանձելու հարցի վերաբերյալ կիրառելի կլինի ԱՕ 265-րդ հոդվածի 1-ին մասը: Ստացվում է այնպես, որ տարբեր ծառայություններում ծառայողների նկատմամբ անօրինական կամ անհիմն արձակվելու արդյունքում ծառայությունում վերականգնվելու պարագայում տարբերակված մոտեցում է ցուցաբերվում՝ չստացված աշխատավարձի դիմաց փոխհատուցում ստանալու հարցում:

Կարող եմ փաստել, որ միայն վերը նշված այդ նորմի կիրառման արդյունքում է հնարավոր ծառայությունից անհիմն կամ անօրինական արձակված ծառայողին տալ ամբողջական դրամական հատուցում, ուստի՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով՝ և «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի

2-րդ մասի «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով հակասում են Սահմանադրության վերը հիշատակված դրույթներին:

Հարկ են համարում արձանագրել, որ Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը, Արցախի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահին հասցեագրված իր Ե0097-22 առ 09.03.2022 թվականի գրության մեջ, կարծիք է հայտնել, որ նշված ծառայություններից անհիմն և անօրինական արձակված ծառայողներին մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրամադրվող դրամական հատուցման չափը հակասում է օրենսդրությամբ նախատեսված՝ մինչև խախտումը եղած դրույթունը վերականգնելու պահանջին, ուստի գտնում է, որ վիճարկվող իրավադրույթները հանգեցնում են չհիմնավորված և օբյեկտիվորեն չարդարացված տարբերակված մոտեցման դրսևորումների, խախտում ծառայողների սեփականության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքները:

Հարկ են համարում նաև ընդգծել, որ մինչև իրավունքի խախտումը եղած դրույթունը վերականգնելու պահանջը, տրամաբանորեն սահմանված է իրավական ակտն անվավեր ճանաչելու՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 42-րդ հոդվածով:

Նշված հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին իրավական ակտով լուծվում են իրավական ակտն անվավեր ճանաչելու հետևանքով անձանց խախտված իրավունքները ճանաչելու կամ մինչև խախտումը եղած իրավական վիճակը վերականգնելու հարցերը, հետևապես վիճարկվող դրույթների իրավաչափության հարցին անդրադառնալով գալիս են այն եզրահանգման, որ օրենսդիրը որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության եղանակ նախատեսում է միայն մինչև իրավունքի խախտումը եղած դրույթության վերականգնումը լրիվ ծավալով, հետևաբար չի կարող օրենսդրի կամքով լինել մասնակի և ոչ ամբողջական, ուստի վերը նշված օրենքների համապատասխան հոդվածները «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, հակասում են Սահմանադրությանը:

Ելնելով վերոգրյալներից գտնում են, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, «Ոստիկանության ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «բայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար» բառակապակցության մասով, այնքանով, որքանով բացառում են իրավական պաշտպանության արդյունավետ և ամբողջական լուծման հնարավորությունը, պետք է ճանաչել Արցախի Հանրապետության Սահմանադրության 10-րդ, 28-րդ, 29-րդ հոդվածների, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր:

**ԱՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

**Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**



**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ  
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 7-րդ կետով՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Ստեղծել Արցախի Հանրապետության բնագավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհուրդ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել Արցախի Հանրապետության բնագավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Մույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. մայիսի 30  
Ստեփանակերտ  
ՆՀ-950-Ն

**Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ**  
**ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

Արտակ Արտյոմի Բեգլարյան	Արցախի Հանրապետության պետական նախարար ( <b>խորհրդի նախագահ</b> )
Լեոնիկ Լենտրուշի Հովհաննիսյան	Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ ( <b>խորհրդի նախագահի տեղակալ</b> )
Գեղամ Գարիի Ստեփանյան	Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան ( <b>համաձայնությամբ</b> )
Դավիթ Կլիմի Բաբայան	Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար
Արամ Կամոյի Հարությունյան	Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր ( <b>համաձայնությամբ</b> )
Վահրամ Արթուրի Պողոսյան	Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ-աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Արմեն Թեմուրի Սարգսյան	Արցախի Հանրապետության Նախագահի խորհրդական
Մելանյա Գուրգենի Բալայան	Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական
Եղիշե Գրիգորի Կիրակոսյան	միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ ( <b>համաձայնությամբ</b> )
Վարդուհի Հրանտի Սահակյան	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության ՅՈՒՆԵՍԿՈ-ի և բազմակողմ կրթամշակութային համագործակցության բաժնի պետ ( <b>համաձայնությամբ</b> )
Աստղիկ Սաշայի Մարաբյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչ ( <b>համաձայնությամբ</b> )
Րաֆֆի Հարությունի Քորթոջյան	Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի փոխտնօրեն ( <b>համաձայնությամբ</b> )

Համլետ Լենսերի Պետրոսյան	փորձագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ( <b>համաձայնությամբ</b> )
Վարդգես Արամայիսի Մաֆարյան	փորձագետ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ ( <b>համաձայնությամբ</b> )
Սերգեյ Նարիկի Շահվերդյան	«Մշակութային ժառանգության պաշտպանության հանրային խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահ ( <b>համաձայնությամբ (խորհրդի քարտուղար-համակարգող)</b> ):

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՇԱՀՐԱՍՄԱՆՅԱՆ

**Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ**  
**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ**  
**ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

1. Արցախի Հանրապետության բռնազավթված տարածքների մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ժամանակավոր խորհրդատվական մարմին է, որի ստեղծման և գործունեության նպատակներն են՝ Արցախի Հանրապետության բռնազավթված տարածքներում գտնվող կամ այնտեղ մնացած մշակութային ժառանգության պաշտպանության, Ադրբեջանի Հանրապետության կողմից դրանց սպառնացող վտանգների չեզոքացման, ապահայկականացմանն ուղղված գործունեությանը հակազդելու համապարփակ ծրագրերի և դրանցից բխող միջոցառումների մշակումը և իրականացումը, այդ ուղղությամբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման լիազոր մարմինների (այսուհետ՝ Լիազոր մարմիններ), փորձագետների, շահագրգիռ այլ կառույցների գործունեության համակարգումը, բնագավառում առկա մարտահրավերներին հակազդեցության կազմակերպումը, ինչպես նաև միջազգային համապատասխան կազմակերպություններին և հանրությանը նշված մշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկությունների պարբերական ու պատշաճ ներկայացումը:

2. Խորհրդի կազմում ընդգրկվում են՝

1) Արցախի Հանրապետության պաշտոնատար անձինք (կոնկրետ դեպքերում՝ համաձայնությամբ)՝ իրենց պաշտոնական լիազորությունների շրջանակներում,

2) Հայաստանի Հանրապետության պաշտոնատար անձինք (համաձայնությամբ)՝ հաշվի առնելով պաշտպանության ենթակա մշակութային ժառանգության համահայկական ու համամարդկային արժեքը և Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև ձևավորված համագործակցության մեխանիզմները,

3) փորձագետներ (համաձայնությամբ)՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական առաջավոր փորձն ու կարողությունները մշակութային ժառանգության ուսումնասիրության ու պաշտպանության ոլորտներում:

3. Անհրաժեշտ ծրագրեր մշակելու և (կամ) իրականացնելու, ինչպես նաև այլ աշխատանքներ կատարելու համար Խորհուրդը կարող է ձևավորել աշխատանքային խմբեր, որոնցում ընդգրկվում են Լիազոր մարմինների կողմից ներկայացված աշխատակիցներ (մասնագետներ) և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերով ներգրավված մասնագետներ:

4. Քաղաքացիաիրավական պայմանագրերով ներգրավված մասնագետների վճարումն իրականացվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝ նախապես համաձայնեցնելով Խորհրդի նախագահի հետ:

5. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

6. Անհրաժեշտության դեպքում Խորհրդի նախագահի կամ անդամների առնվազն կեսի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել արտահերթ նիստ:

7. Խորհրդի նիստերի մասին Խորհրդի անդամներին (անհրաժեշտության դեպքում՝ նաև հանրությանը) տեղեկացնում է Խորհրդի քարտուղար-համակարգողը՝ նիստից առնվազն երեք օր առաջ, իսկ հրատապ լուծում պահանջող հարցեր քննարկելու անհրաժեշտության դեպքում՝ մեկ օր առաջ:

8. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների երկու երրորդը: Քվորումի բացակայության դեպքում մեկ շաբաթվա ընթացքում հրա-վիրվում է նոր նիստ:

9. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

10. Խորհրդի նիստերն անցկացվում են Խորհրդի կողմից հաստատված օրակարգով:

11. Խորհրդի նիստի արձանագրությանը, անհրաժեշտության դեպքում, կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութեր, այդ թվում՝ իրավական և այլ փաստաթղթերի նախագծեր (հայեցակարգեր, ռազմավարություններ, ծրագրեր, հաշվետվություններ և այլն), գրավոր զեկույցներ, առաջարկություններ, կարծիքներ:

12. Խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում է Խորհրդի գործունեությունը և ապահովում որոշումների կատարման նկատմամբ հսկողությունը,

2) հրավիրում և վարում է Խորհրդի նիստերը,

3) որոշում է Խորհրդի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը,

4) համակարգում է Խորհրդի անդամների աշխատանքը,

5) իրականացնում է Խորհրդի գործունեության նպատակներից բխող այլ գործառույթներ:

13. Խորհրդի քարտուղար-համակարգողը՝

1) ապահովում է Խորհրդի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը,

2) իրականացնում է Խորհրդի նիստերի նախապատրաստական աշխատանքները,

3) ապահովում է Խորհրդի գործունեության մասին տեղեկատվության տարածումը,

4) ապահովում է Խորհրդի անդամների ու աշխատանքային խմբերի միջև մշտական կապը,

5) համակարգում և կազմակերպում է Խորհրդի, աշխատանքային խմբերի ընթացիկ աշխատանքները,

6) Խորհրդի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ:

14. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) մասնակցել Խորհրդի նիստերին՝ վերջինիս իրավասությանը վերաբերող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

2) Խորհրդի նիստերում հանդես գալ առաջարկություններով,

3) ներկայացնել Խորհրդի որոշումների նախագծեր, Խորհրդի որոշմամբ իրականացնել այլ լիազորություններ:

15. Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) իրականացնել Խորհրդի որոշմամբ իր վրա դրված աշխատանքներն ու պարտականությունները,

2) անհրաժեշտության դեպքում մասնակցել Խորհրդի, աշխատանքային խմբերի ընթացիկ աշխատանքներին,

3) պահպանել սույն աշխատակարգի դրույթները, կատարել Խորհրդի որոշումները, հնարավորինս աջակցել Խորհրդի աշխատանքներին և նպաստել նրա որոշումների կատարմանը:

16. Խորհրդի կողմից մշակված միջոցառումները և այլ աշխատանքներն իրականացվում են Լիազոր մարմինների միջոցով՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

17. Խորհրդի նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

18. Խորհուրդն իր նպատակներն իրականացնելու համար կարող է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝**

**Կ. ՇԱՀՐԱՍՄԱՆՅԱՆ**

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակման անհրաժեշտությունից և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 7-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ**.

1. Հավանություն տալ Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից հաստատված և 2022 թվականի մայիսի 31-ին Արցախի Հանրապետության Նախագահին ներկայացված Արցախի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին:

2. Ստեղծել Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով (այսուհետ՝ մասնագիտական հանձնաժողով):

3. Հաստատել.

1) մասնագիտական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մասնագիտական հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Մասնագիտական հանձնաժողովին՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը Արցախի Հանրապետության Նախագահին ներկայացնել Արցախի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների նախագիծը:

5. Մասնագիտական հանձնաժողովի քարտուղար նշանակել Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության աշխատակազմի իրավական ապահովման և օրինականության վերահսկողության բաժնի պետ Լուսինե Բարխուդարյանին:

6. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. հունիսի 1  
Ստեփանակերտ  
ՆՀ-967-Ն

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԸՆԹԵՐ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ**  
**ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Արայիկ Լազարյան	Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ ( <b>հանձնաժողովի նախագահ</b> )
Գայանե Գրիգորյան	Արցախի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի նախագահ ( <b>համաձայնությամբ</b> )
Ժիրայր Միրզոյան	Արցախի Հանրապետության արդարադատության նախարար
Սրբուհի Արզումանյան	Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ
Շուշանիկ Հայրապետյան	Արցախի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամ ( <b>համաձայնությամբ</b> )
Սոնա Համբարձումյան	Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Մարինա Սաֆարյան	Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի աշխատակազմի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ-գլխավոր մասնագետ
Արարատ Դանիելյան	իրավաբանական գիտությունների թեկնածու, ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դոցենտի պաշտոնակատար ( <b>համաձայնությամբ</b> )
Կարեն Դանիելյան	իրավաբան ( <b>համաձայնությամբ</b> )
Վահե Հարությունյան	իրավաբան ( <b>համաձայնությամբ</b> ):

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝**

**Կ.ՇԱՀՐԱՄՍՆՅԱՆ**

**Կ Ա Ր Գ**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌՐԼԹԵՐ**  
**ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Մույն կարգով սահմանվում են Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) խնդիրները, գործառույթները և գործունեության կազմակերպումը:

2. Հանձնաժողովի նախագահը, անդամները և քարտուղարը գործում են հասարակական հիմունքներով:

3. Հանձնաժողովի լիազորությունները դադարում են Արցախի Հանրապետության Ազգային ժողովի կողմից սահմանադրական բարեփոխումների նախագիծը հանրաքվեի դրվելու օրը:

**2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

4. Հանձնաժողովի հիմնական խնդիրն է սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակումը:

5. Հանձնաժողովը՝

1) քննարկում է սահմանադրական բարեփոխումների նախագծի վերաբերյալ առաջարկություններն ու միջնորդությունները.

2) անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծել աշխատանքային խմբեր.

3) հանձնաժողովի աշխատանքներին կարող է ներգրավել մասնագետներ, ստանալ մասնագիտական կարծիքներ.

4) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից կարող է ստանալ իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկություններ.

5) սահմանադրական բարեփոխումների նախագծի վերաբերյալ անցկացնում է հանրային քննարկումներ.

6) հաստատում է հանձնաժողովի նիստերի օրակարգը.

7) հաստատում է հանձնաժողովի աշխատանքային ծրագիրը.

8) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների լուսաբանումը և հրապարակայնությունը:

6. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

3) կազմակերպում է քննարկումներ շահագրգիռ մարմինների, անձանց և կազմակերպությունների մասնակցությամբ.

4) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և կազմակերպությունների հետ հարաբերություններում.

5) պարբերաբար Արցախի Հանրապետության Նախագահին է ներկայացնում հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հաղորդումներ.

6) Արցախի Հանրապետության Նախագահին է ներկայացնում հանձնաժողովի կողմից մշակված սահմանադրական բարեփոխումների նախագիծը:

**3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

7. Հանձնաժողովի գործունեության սկզբունքներն են՝ կոլեգիալությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը:

8. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով՝ ըստ հանձնաժողովի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի:



9. Հանձնաժողովի նիստերը գումարվում են հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության:

10. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից մեկը: Հանձնաժողովի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը, որպես կանոն, հանձնաժողովի անդամներին են հանձնվում ոչ ուշ, քան նիստից երկու օր առաջ:

11. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի նիստերի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում է նիստը նախագահողը:

12. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

13. Եթե հանձնաժողովի որևէ անդամ հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրա ցանկությամբ այն գրավոր կցվում է հանձնաժողովի որոշմանը:

14. Հանձնաժողովի թույլտվությամբ հանձնաժողովի նիստերին կարող են մասնակցել այլ անձինք:

15. Հանձնաժողովը սահմանադրական բարեփոխումների նախագիծը հաստատելուց առաջ կազմակերպում է դրա ամփոփիչ հանրային քննարկում:

16. Հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովում է քարտուղարությունը, որի գործառույթներն իրականացնում է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչությունը:

17. Քարտուղարությունը

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգին վերաբերող նյութերը և կազմակերպում դրանց տրամադրումը հանձնաժողովի անդամներին.

2) ապահովում է հանձնաժողովի որոշումների նախագծերի կազմումը.

3) կազմակերպում է նիստերի արձանագրումը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

4) վարում է հանձնաժողովի գործավարությունը.

5) արձանագրում է հանձնաժողովին ներկայացված առաջարկությունները և պահպանում դրանք.

6) գրանցում է հանձնաժողովի անդամների գրավոր ներկայացրած հատուկ կարծիքները.

7) կազմակերպում է հանձնաժողովի որոշումների տրամադրումը հանձնաժողովի անդամներին, շահագրգիռ մարմիններին, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ այլ անձանց և կազմակերպություններին.

8) հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում շահագրգիռ անձանց և կազմակերպություններին.

9) իրականացնում է հանձնաժողովի գործունեության իրականացման հետ կապված տեխնիկական, կազմակերպական և ընթացիկ աշխատանքները:

18. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է հանձնաժողովի նիստերին.

2) համակարգում է աշխատանքային խմբերի և մասնագետների աշխատանքները.

3) ամփոփում է աշխատանքային խմբերի և մասնագետների եզրակացությունները, տեղեկանքները և դրանք ներկայացնում հանձնաժողովին.

4) ամփոփում է սահմանադրական բարեփոխումների նախագծի վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները և դրանք ներկայացնում հանձնաժողովին.

5) իր գործառույթներն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարության օժանդակությամբ:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝**

**Կ.ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 հունիսի 2022թ.

N 621-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022  
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի «Ռեզոլուցիայի մասին» հրավերի հիմամբ հաստատված և (կամ) իրավաբանական անձանց կողմից գույքն օգտագործման տրամադրված հատուկ կարգը և պայմանները սահմանելու և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 4-ի N 193-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 199-Ն որոշումն սահմանված կարգի՝

1) 16-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16.1-ին կետ՝

«16.1. Վարձակալի համապատասխան եզրակացության հիման վրա՝ մինչև անշարժ գույքի նկատմամբ վարձատրուի հետ կարող է կնքվել երկու և ավելի վարձակալության պայմանագրեր, եթե տվյալ անշարժ գույքի յուրաքանչյուր վարձակալվող տարածքի պայմանները համապատասխանում են սույն կարգով սահմանված կացարանի պայմաններին»:

2) 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 17.1-ին կետ՝

«17.1. Փոխատուի և փոխառուի միջև չի կարող կնքվել անհատույց օգտագործման պայմանագիր, եթե վերջինս վարձատրուի հետ գտնվում է մերձավոր ազգակցական (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների) կապի մեջ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 հունիսի 2022թ.

N 628-Ն

ք. Ստեփանակերտ

**«ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ»  
ԵՎ «ՔԱՇԱԹԱՂԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը և 24-րդ հոդվածի 1-ին կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ**։

1. Միացման ձևով վերակազմակերպել

1) «Շահումյանի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ այն միացնելով «Մարտակերտի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը։

2) «Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ այն միացնելով «Շուշիի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը։

2. Սահմանել, որ

1) «Շահումյանի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ «Մարտակերտի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միանալուց հետո միացած իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն անցնելու են «Մարտակերտի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ փոխանցման ակտին համապատասխան։

2) «Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ «Շուշիի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միանալուց հետո միացած իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն անցնելու են «Շուշիի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ փոխանցման ակտին համապատասխան։

3. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել վերակազմակերպման գործընթացն՝ ապահովելով՝

1) անհրաժեշտ փաստաթղթերն իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմին ներկայացումը, «Մարտակերտի անասնաբուժական սպասարկման կայան» և «Շուշիի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների մեջ փոփոխությունների կատարման վերաբերյալ Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացումը։

2) «Շահումյանի անասնաբուժական սպասարկման կայան» և «Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության դադարման պետական գրանցումը։

4. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի «Շահումյանի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ստեղծելու և «Շահումյանի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 64 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և «Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 139 որոշումները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա 4-րդ կետը՝ «Շահումյանի անասնաբուժական սպասարկման կայան» և «Քաշաթաղի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության դադարեցման պետական գրանցման պահից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

25 մայիսի 2022թ.

ՆՀ-110-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ  
ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՄԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 25-ի N 392-ՏՆ եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

**1. Դադարեցնել՝**

1) **«Օմեգա Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00336 լիցենզիայի N00014, N00017, N00020, N00021, N00022, N00023 և N00024 ներդիրների (RENAUIT LOGAN մակնիշի 999DD21, 999AA21, 999XX21 պետհամարանիշի, TOYOTA CAMRY 2.5 մակնիշի 999QO21, 999RR21, 999SS21, 999OQ21 պետհամարանիշի ավտոմեքենաների) գործողությունները.

2) **անհատ ձեռնարկատեր Արթուր Մանթաշի Պետրոսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00354 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

3) **անհատ ձեռնարկատեր Գագիկ Ալեքսեյի Հակոբյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00384 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

4) **անհատ ձեռնարկատեր Մհեր Մերգելի Մարգարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00390 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

5) **անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Ռաֆայելի Հովհաննիսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00405 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

6) **ֆիզիկական անձ Նվեր Ռոմանի Հովակիմյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00435 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

7) **ֆիզիկական անձ Վալերի Հրաչիկի Հակոբջանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական

ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00482 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

8) **Ֆիզիկական անձ Սասուն Անուշավանի Գասպարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդաստար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00533 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**Հայկ Խանումյան**

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

01 հունիսի 2022թ.

ՆՀ-113-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ  
ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 1-ի N 393-ՏՆ եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

**1. Դադարեցնել՝**

1) **անհատ ձեռնարկատեր Մասիս Մելիսիի Բեգլարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00208 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

2) **անհատ ձեռնարկատեր Դավիթ Զավենի Մարգարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00397 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

3) **ֆիզիկական անձ Նվեր Կովկազի Ասլանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00606 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

4) **ֆիզիկական անձ Էդուարդ Գրիգորիի Ադամյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00613 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

5) **ֆիզիկական անձ՝ Մարատ Վլադիմիրի Մարգարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00677 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

6) **ֆիզիկական անձ Արմեն Սամվելի Բարսեղյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00682 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

7) **ֆիզիկական անձ Արթուր Ավետիսի Եգանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00708 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

8) **անհատ ձեռնարկատեր Նորայր Միքայելի Ղահրամանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական

տական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00746 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

9) **Ֆիզիկական անձ Կարեն Վալերիի Հակոբյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00753 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**Հայկ Խանումյան**



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

27 մայիսի 2022թ.

N 160-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 26.05.2022թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

**հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Ներքոնշյալ ընկերությանը տրամադրել լիցենզիա՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

<b>N</b>	<b>Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը</b>	<b>Գործունեության տեսակը</b>
1	«ԱԿՎԱ ԼԱՅՆ» ՍՊԸ ք. Ստեփ., Այ. Մանուկյան փող., շ. 11/11	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

**ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ՄԱՐԳՍՅԱՆ**

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում  Քաղաքացիական գործ  
ԸԻԴ/0011/02/18

Քաղաքացիական գործ ԸԻԴ/0011/02/18

Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան

Դատավորներ՝

Լ.Ավանեսյան

Մ.Ավանեսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ

11-ին մայիսի 2022 թվականի

ԱՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝  
մասնակցությամբ՝ դատավորներ

Ն.Նարիմանյանի  
Կ.Ղարայանի  
Ա.Աբրահամյանի  
Հ.Աբրահամյանի  
Հ.Խաչատրյանի

դո՛ւրս քաղաքացիական նիստում, քննելով ըստ հայցի Դավիթ Հենրիխի Գրիգորյանի ընդդեմ Էրիկ Ալբերտի Գրիգորյանի, Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի, Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի, Անահիտ Ռոբերտի Իվանովիչի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ հակընդդեմ հայցի Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի և Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի ընդդեմ Դավիթ Հենրիխի Գրիգորյանի, Էրիկ Ալբերտի Գրիգորյանի, Անահիտ Ռոբերտի Իվանովիչի և Ստեփանակերտի թիվ 1 նոտարական տարածքի պետնոտարի՝ ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու, վկայագիրն ու գրառումն անվավեր ճանաչելու և ըստ հակընդդեմ հայցի Էրիկ Ալբերտի Գրիգորյանի ընդդեմ Դավիթ Հենրիխի Գրիգորյանի, Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի, Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի, Անահիտ Ռոբերտի Իվանովիչի՝ և Ստեփանակերտի թիվ 1 նոտարական տարածքի պետնոտարի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և վկայագիրն ու գրառումն անվավեր ճանաչելու պահանջների մասին ԸԻԴ/0011/02/18 քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 03-ի որոշման դեմ հայցվոր /հակընդդեմ պատասխանող/ Դավիթ Գրիգորյանի ներկայացուցիչ Ռոման Երիցյանի և պատասխանողների /հակընդդեմ հայցվորներ/ ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի վճռաբեկ բողոքները,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

2018 թվականի հունվարի 10-ին Դավիթ Հենրիխի Գրիգորյանն /այսուհետ, նաև՝ Հայցվոր/ ընդդեմ Ալբերտ Ասծատուրի Գրիգորյանի, Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի, Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի և Ռոբերտ Ասծատուրի Գրիգորյանի հայցադիմում է ներկայացրել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ, նաև՝ Դատարան/ խնդրելով իրեն ճանաչել իր մոր՝ Ռայա Ասծատուրի Գրիգորյանի թողած ժառանգության՝ մասնավորապես՝ Ստեփանակերտ քաղաքի Մխիթար Սպարապետ փողոցի թիվ 30 /նախկինում թիվ 18/ հասցեում գտնվող անշարժ

գույքի /այսուհետ, նաև՝ Բնակելի տուն/ նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Դատարանի /դատավոր Ռ.Ջհանգիրյան/ 2018 թվականի հունվարի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Դատարանի 2018 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ հրավիրվել է նախնական դատական նիստ:

Դատարանի 2018 թվականի մարտի 19-ի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև օրենքով սահմանված ժառանգության ընդունման ժամկետի ավարտը:

Դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ պատասխանող Ալբերտ Ասծատուրի Գրիգորյանը փոխարինվել է իրավահաջորդով՝ Էրիկ Ալբերտի Գրիգորյանով, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և հրավիրվել է նախնական դատական նիստ:

2018 թվականի նոյեմբերի 05-ին ԸԲԴ/0011/02/18 քաղաքացիական գործը մակագրվել է դատավոր Դ. Հակոբյանին:

Դատարանի /դատավոր Դ. Հակոբյան/ 2018 թվականի նոյեմբերի 07-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և հրավիրվել նախնական դատական նիստ:

Դատարանի 2019 թվականի մայիսի 07-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

2019 թվականի սեպտեմբերի 12-ին Արթուր Ռաֆայելի Գրիգորյանը և Արմեն Ռաֆայելի Գրիգորյանն ընդդեմ Դավիթ Հենրիխի Գրիգորյանի, Էրիկ Ալբերտի Գրիգորյանի, Ռոբերտ Ասծատուրի Գրիգորյանի և Ստեփանակերտի թիվ 1 նոտարական տարածքի պետնոտարի հակընդդեմ հայցադիմում են ներկայացրել Դատարան՝ խնդրելով իրենց ճանաչել հայրական կողմի պապի՝ Ասծատուր Խաչատուրի Գրիգորյանի մահից հետո որպես ժառանգական գույք մնացած Բնակելի տան և նրա կից տնամերձ հողամասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ և անվավեր ճանաչել Ստեփանակերտի թիվ 1 նոտարական գրասենյակի կողմից 1994 թվականի հուլիսի 04-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա 1988 թվականի փետրվար ամսին տրված սեղանամատյանի թիվ 198 համարի տակ տնատիրության տեխանձնագրում Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանի անվամբ կատարված գրառումը:

Դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

2019 թվականի հոկտեմբերի 11-ին Էրիկ Ալբերտի Գրիգորյանն ընդդեմ Դավիթ Հենրիխի Գրիգորյանի, Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի, Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի, Ռոբերտ Ասծատուրի Գրիգորյանի և Ստեփանակերտի թիվ 1 նոտարական տարածքի պետնոտարի հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել Դատարան՝ խնդրելով իրեն ճանաչել հայրական կողմի պապի՝ Ասծատուր Խաչատուրի Գրիգորյանի մահից հետո որպես ժառանգական գույք մնացած Բնակելի տան և նրա կից տնամերձ հողամասի 1/2-ական մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ և անվավեր ճանաչել Ստեփանակերտի թիվ 1 նոտարական գրասենյակի կողմից 1994 թվականի հուլիսի 04-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա 1988 թվականի փետրվար ամսին տրված և սեղանամատյանի թիվ 198 համարի տակ տնատիրության տեխանձնագրում Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանի անվամբ կատարված գրառումը:

Դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

Դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 04-ի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև օրենքով սահմանված ժառանգության ընդունման ժամկետի ավարտը:

Դատարանի 2020 թվականի հունիսի 30-ի որոշմամբ պատասխանող Ռոբերտ Ասծատուրի Գրիգորյանը փոխարինվել է իրավահաջորդով՝ Անահիտ Ռոբերտի Իվանովիչով, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է նշանակվել է դատական քննության:

2021 թվականի մարտի 25-ին հայցվոր Դավիթ Հենրիխի Գրիգորյանի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ խնդրելով հստակեցնել կամ փոփոխել հայցապահանջը և այն շարադրված համարել հետևյալ բովանդակությամբ. Հայցվորի մորը՝ Ռայա Ասծատուրի Գրիգորյանին, ճանաչել Հայցվորի տատիկի՝ Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և որպես հետևանք ճանաչել Ռայա Ասծատուրի Գրիգորյանի ժառանգության զանգվածի մեջ մտնող Բնակելի տունը հայցվորի Դավիթ Հենրիխի Գրիգորյանի կողմից իր մորից Ռայա Ասծատուրի Գրիգորյանից ժառանգելու փաստը:

Դատարանի 2021 թվականի մարտի 29-ի որոշմամբ հայցի առարկան փոփոխելու մասին հայցվոր Դավիթ Գրիգորյանի ներկայացուցիչ Ռոման Երիցյանի միջնորդությունը մերժվել է:

Դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի վճռով հայցը և հակընդդեմ հայցերը մերժվել են:

Նշված վճռի դեմ հայցվոր /հակընդդեմ պատասխանող/ Դավիթ Գրիգորյանի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը 2021 թվականի դեկտեմբերի 20-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով մասնակիորեն՝ սկզբնական հայցը մերժելու մասով, վճիռը բեկանել և հայցը բավարարել կամ գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ բողոքը և քաղաքացիական գործը ԱՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ, նաև՝ Վերաքննիչ դատարան/ դատական կազմին են հանձնվել 2021 թվականի դեկտեմբերի 23-ին:

Նույն վճռի դեմ 2022 թվականի հունվարի 13-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել նաև պատասխանողներ /հակընդդեմ հայցվորներ/ Արթուր և Արմեն Ռաֆայելի Գրիգորյանները և նրանց ներկայացուցիչ Ա.Մադաթյանը՝ խնդրելով մասնակիորեն իրենց հակընդդեմ հայցը մերժելու մասով, վճիռը բեկանել և հակընդդեմ հայցը բավարարել կամ գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի դատական կազմին է հանձնվել 2022 թվականի հունվարի 13-ին:

Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 17-ի որոշմամբ վերաքննիչ բողոքներն ընդունվել են վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 03-ի որոշմամբ որոշվել է. «Վերաքննիչ բողոքները մասնակիորեն բավարարել:

ԸԲԴ/0011/02/18 քաղաքացիական գործով ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել:

Դավիթ Հենրիխի Գրիգորյանի հայցն ընդդեմ Էրիկ Ալբերտի Գրիգորյանի, Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի, Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի, Անահիտ Ռաֆայելի Իվանովիչի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին՝ բավարարել մասնակիորեն:

Դավիթ Հենրիխի Գրիգորյանին ճանաչել իր մոր՝ Ռայա Ասծատուրի Գրիգորյանի թողած ժառանգության՝ մասնավորապես՝ Ստեփանակերտ քաղաքի Մխիթար Սպարապետ փողոցի թիվ 30 /նախկինում թիվ 18/ հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2-րդ մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Դավիթ Հենրիխի Գրիգորյանի հայցը՝ մնացած մասով, մերժել:

Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի և Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Դավիթ Հենրիխի Գրիգորյանի, Էրիկ Ալբերտի Գրիգորյանի, Անահիտ Ռոբերտի Իվանովիչի, Ստեփանակերտի թիվ 1 նոտարական տարածքի պետնոտարի՝ բավարարել մասնակիորեն:

Մասնակիորեն՝ 1/2-րդ մասով անվավեր ճանաչել Ստեփանակերտի թիվ 1 նոտարական գրասենյակի կողմից 1994 թվականի հուլիսի 04-ին Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա 1988 թվականի փետրվար ամսին տրված սեղանամատյանի թիվ 198 համարի տակ գրանցված տնտեսիքության տեխանձնագրում Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանի անվամբ այդ մասով կատարված գրառումը:

Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի և Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի հակընդդեմ հայցը՝ մնացած մասով, մերժել:

Սկզբնական հայցով պատասխանողներ Էրիկ Ալբերտի Գրիգորյանից, Արթուր Ռաֆայելի Գրիգորյանից, Արմեն Ռաֆայելի Գրիգորյանից և Անահիտ Ռոբերտի Իվանովիչից հօգուտ հայցվոր Դավիթ Հենրիխի Գրիգորյանի բռնագանձել 75.000 /յոթանասուներեք հազար/ ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված»:

Նշված որոշման դեմ 2022 թվականի մարտի 09-ին և մարտի 25-ին վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Հայցվորի /հակընդդեմ պատասխանող/ ներկայացուցիչ Ռոման Երիցյանը և պատասխանողների /հակընդդեմ հայցվորներ/ ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանը:

Գերագույն դատարանի 2022 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

## **2.Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները**

### **2.1. Հայցվորի /հակընդդեմ պատասխանողի/ ներկայացուցիչ Ռ.Երիցյանի վճռաբեկ բողոքը**

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ և 99-րդ հոդվածների պահանջները, անտեսել է «շահագրգիռ անձ» հասկացության մասով Գերագույն դատարանի նախադեպային դիրքորոշումը, ակնհայտ դուրս է եկել հակընդդեմ հայցի առարկայի սահմաններից, քննության առարկա է դարձրել վարչական դատավարության կարգով վիճարկման ենթակա հայցապահանջը, ինչի հետևանքով կայացրել է անհիմն դատական ակտ:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցների վերլուծությամբ արձանագրել է, որ Վարդանուշ Գրիգորյանի մահից հետո նրա թողած ժառանգությունը ընդունվել է Հայցվորի մոր՝ Ռայա Գրիգորյանի կողմից: Բողոքաբերի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմնավորումների համատեքստում Վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրահանգման, որ հայցվոր Դավիթ Գրիգորյանը պետք է ճանաչվի իր մոր ժառանգությունն ընդունած ժառանգ:

Մինևույն ժամանակ, անդրադառնալով պատասխանող կողմի ներկայացրած վերաքննիչ բողոքին և դուրս գալով դրա սահմաններից՝ ստորադաս դատարանը ստորև շարադրված պատճառաբանությամբ հաջորդաբար և հավասարապես կրճատել է սկզբից Վարդանուշ, այնուհետև՝ Ռայա Գրիգորյանների ժառանգության զանգվածը, ինչի հիման վրա էլ

Հայցվորին ճանաչել է ընդամենը 1/2-րդ մասով վիճելի տան նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Իր որոշման մեջ Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «Հայցվոր Դավիթ Գրիգորյանի մոր՝ Ռայա Գրիգորյանի մահից հետո բացված ժառանգության ժառանգական զանգվածի մեջ էր մտնում նաև վերջինիս կողմից իր մոր՝ Վարդանուշ Գրիգորյանի մահից հետո փաստացի ընդունած Բնակելի տունը, որը և որպես ժառանգություն, Դավիթ Գրիգորյանի կողմից համարվում է ընդունված, քանի որ նա արդեն իսկ մոր մահից հետո օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետում դիմել է նոտարական գրասենյակ և ընդունել բացված ժառանգության մասը»:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ հակընդդեմ հայցվորներ Արթուր և Արմեն Գրիգորյանները խնդրել են ոչ թե իրենց ճանաչել իրենց հոր՝ Ռաֆայել Գրիգորյանի մահից հետո ժառանգությունն ընդունած ժառանգներ, ինչպես սխալմամբ արձանագրել է Դատարանը, այլ խնդրել են իրենց ճանաչել հայրական կողմի պապ՝ Ասծատուր Խաչատուրի Գրիգորյանի մահից հետո որպես ժառանգական գույք մնացած Բնակելի տան և դրան կից տնամերձ հողամասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Ըստ բողոքաբերի՝ քննության առնելով Արթուր և Արմեն Գրիգորյանների հակընդդեմ հայցապահանջը, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հակընդդեմ հայցվորները որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չեն ներկայացրել ապացուցելու համար այն փաստը, որ նրանք ինչպես իրենց հոր՝ Ռաֆայել Գրիգորյանի, այնպես էլ իրենց պապ՝ Ասծատուր Գրիգորյանի մահից հետո բացված ժառանգությունը, մասնավորապես, Բնակելի տունն ընդունել են կամ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով, կամ ժառանգության բացման վայրի նոտարական գրասենյակ դիմելու միջոցով:

Այսինքն, Վերաքննիչ դատարանն այս առումով իրավաչափ է համարում Դատարանի կողմից հակընդդեմ հայցվորներ Արթուր և Արմեն Գրիգորյանների հակընդդեմ հայցապահանջը մերժելու մասին դիրքորոշումը:

Հաշվի առնելով իր որոշմամբ արձանագրված հակընդդեմ հայցվորների հայր Ռաֆայել Գրիգորյանի կողմից իր հոր՝ Ասծատուր Գրիգորյանի մահից հետո փաստացի տիրապետման եղանակով Բնակելի տունը որպես ժառանգական գույք ընդունելու փաստը, Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարել նաև անդրադառնալ Ստեփանակերտի թիվ 1 նոտարական գրասենյակի կողմից 1994 թվականի հուլիսի 04-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրին ու դրա հիման վրա 1988 թվականի փետրվար ամսին տրված և սեղանամատյանի թիվ 198 համարի տակ տնատիրության տեխանձնագրում Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանի անվամբ կատարված գրառումն անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցվորներ Արթուր և Արմեն Գրիգորյանների պահանջին:

Վերաքննիչ դատարանը Հայցվորի հայցի մասնակի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հայցվորի պապ Ասծատուր Գրիգորյանի թողած ժառանգությունն ընդունվել է ոչ միայն իր տատիկի՝ Վարդանուշ Գրիգորյանի կողմից նոտարական գրասենյակ դիմում հասցեագրելու միջոցով, այլ նաև իր հորեղբոր՝ Ռաֆայել Գրիգորյանի կողմից՝ փաստացի տիրապետման եղանակով, հետևաբար, Վարդանուշ Գրիգորյանին տված ժառանգության իրավունքի վկայագիրը 1/2-րդ մասով անվավեր է:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ռաֆայել Գրիգորյանի առաջին հերթի ժառանգների հակընդդեմ հայցի մյուս պահանջը՝ նրանց ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու հարցում, արձանագրելով, որ այդ մասով որևէ վերաբերելի ապացույց Դատարանին չի ներկայացվել:

Ըստ բողոքի հեղինակի՝ եթե հակընդդեմ հայցվորները չեն հանդիսանում Ռաֆայել Գրիգորյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ, ապա Վերաքննիչ դատարանն անվավեր ճանաչելով Հայցվորի տատիկին՝

Վարդանուշ Գրիգորյանին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը, քննության է առել ոչ շահագրգիռ անձի անունից Դատարան հասցեագրված հայցապահանջ, ինչը հակասում է ոչ շահագրգիռ անձանց անունից Դատարան հասցեագրված հայցապահանջների քննության մասով Գերագույն դատարանի նախադեպային դիրքորոշմանը: Ի՞նչ առավելություն է տալիս հակընդդեմ հայցվորներին և ինչո՞վ են նրանք շահագրգռված ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և Ռաֆայել Գրիգորյանին ևս ժառանգ ճանաչելու հարցում, եթե հակընդդեմ հայցվորները չեն ընդունել Ռաֆայել Գրիգորյանի թողած ժառանգությունը:

Բողոքաբերի կարծիքով՝ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու հարցը չէր կարող հանդիսանալ սույն գործով վեճի ինքնուրույն առարկա, քանի որ Վերաքննիչ դատարանի տրված պարզաբանումներից հետևում է, որ նոտարը որպես վարչական մարմին խախտել է «Նոտարիատի մասին» ԼՂՀ օրենքի և ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները, այսինքն՝ հաշվի չի առել, որ բացի Վարդանուշ Գրիգորյանից ժառանգությունն ընդունել է նաև Ռաֆայել Գրիգորյանը, մինչդեռ նշված հարցը, ըստ բողոքաբերի, կարող է քննարկվել վարչական դատավարության կարգով: Ըստ այդմ՝ ժառանգության իրավունքի վկայագիրը քաղաքացիական դատավարության կարգով անվավեր կարող էր ճանաչվել միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

ա. Հակընդդեմ հայցվորներն ընդունած լինեին իրենց հոր՝ Ռաֆայել Գրիգորյանի թողած ժառանգությունը և ստանձնեին շահագրգռվածություն Դատարան դիմելու հարցում,

բ. Դատարան հասցեագրվեր Ասծատուր Գրիգորյանի թողած ժառանգությունը Ռաֆայել Գրիգորյանի կողմից փաստացի տիրապետելու ուժով վերջինիս ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և, որպես հետևանք, ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու հայցապահանջ:

Ըստ բողոքաբերի՝ պայմանական ժառանգությունից հրաժարվելու դիմումի առկայության պայմաններում կամ առնվազն նշված հարցը չպարզվելու պայմաններում Դատարանը ոչ շահագրգիռ անձանց և լրիվ այլ հայցապահանջի հիման վրա քննության առարկա է դարձրել ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու հիմնական հայցապահանջը, որի մասնակի անվավերության հարցում հակընդդեմ հայցվորները հոր ժառանգությունն ընդունած ժառանգ չճանաչվելու՝ Վերաքննիչ դատարանի եզրահանգման համատեքստում նույնիսկ շահագրգռվածություն չունեն:

Բողոք բերողը նշել է, որ Ասծատուր Գրիգորյանի մահից հետո վերջինիս ժառանգությունը բաղկացած էր ոչ թե Բնակելի տան մեկ ամբողջությունից, այլ 1/2-րդ մասից, ուստի Վարդանուշ Գրիգորյանի անվամբ տնատիրության տեխանձնագրում կատարված գրառումը Վերաքննիչ դատարանի վերոգրյալ անհիմն դատողությունների համատեքստում անվավեր կարող էր ճանաչվել առավելագույնը 1/4-րդ մասով, իսկ մնացած 3/4-րդ մասով ժառանգությունը պետք է անցներ Դավիթ Գրիգորյանին, քանի որ իր տասիկի և վերջինիս ժառանգի՝ Հայցվորի մոր ժառանգության զանգվածը բաղկացած էր հենց այդ ծավալից:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը հիմնավորվել է նրանով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ վարչական և քաղաքացիական հայցերի ընդդատության տարանջատման, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի միատեսակ կիրառության և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի ԸԲԴ/0011/02/18 քաղաքացիական գործով 2022 թվականի մարտի 03-ին կայացված վերաքննիչ բողոքները մասնակի բավարարելու մասին որոշումը, սկզբնական հայցը բավարարել լրիվությամբ, Արթուր և Արմեն

Գրիգորյանների հակընդդեմ հայքը լրիվությամբ մերժել կամ գործն ուղարկել նոր քննության սահմանելով նոր քննության ծավալը:

## **2.2. Պատասխանողների /հակընդդեմ հայցվորների/ ներկայացուցիչ Ա. Մաղաթյանի վճռաբեկ բողոքը**

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ հոդվածները, 47-րդ հոդվածի 1-ին մասը, 49-րդ հոդվածը, 122-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերը, 229-րդ հոդվածը, 230-րդ հոդվածի 5-րդ մասը, 231-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերը, 239-րդ և 240-րդ հոդվածների պահանջները, Արթուր և Արմեն Գրիգորյանների հակընդդեմ հայցապահանջի մասով չի կիրառել իրավահարաբերության ծագման պահին ԼՂՀ տարածքում գործող նախկին 1964 թվականի հունիսի 04-ին ընդունված Հայկական ՄՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ, 554-րդ հոդվածների պահանջները, որի արդյունքում մերժել է նրանց պահանջը, ինչպես նաև սկզբնական հայցվորի պահանջի նկատմամբ չի կիրառել նույն օրենսգրքի 560-րդ և 561-րդ հոդվածների պահանջները և բավարարել է սկզբնական հայցվորի անհիմն հայցապահանջը, չի ղեկավարվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով իրեն վերապահված լիազորությամբ, որի արդյունքում ամբողջությամբ չի մերժել սկզբնական հայցվորի վերաքննիչ բողոքը, ինչպես նաև չի բավարարել հակընդդեմ հայցվորների պահանջը:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը սկզբնական և հակընդդեմ հայցապահանջները բավարարել է մասնակիորեն՝ հիմնականում եզրահանգելով, որ Ասծատուր Գրիգորյանի մահից հետո բացված ժառանգությունը՝ Մ.Մպարապետ փողոցի թիվ 30 /նախկինում թիվ 18/ հասցեում գտնվող գույքի՝ նկատմամբ նոտարական գրասենյակ դիմելու միջոցով ընդունել է նրա կինը՝ Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանը, իսկ փաստացի տիրապետման և կառավարման միջոցով նրա որդին՝ Ռաֆայել Ասծատուրի Գրիգորյանը՝ հավասար 1/2-ական բաժիններով, և քանի որ Դավիթ Գրիգորյանը մոր մահից հետո վեցամսյա ժամկետում նոտարիատ դիմելու եղանակով արդեն իսկ ընդունել էր ժառանգությունը՝ մոր մահից հետո որպես ժառանգական գույք մնացած Ա.Իռաիֆյան 39ա փողոցում գտնվող առանձնատան նկատմամբ, հետևաբար, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1234-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում, ուստի և նա ընդունել է նաև իր տատիկի թողած ժառանգությունը՝ ողջ գույքի 1/2-ական մասի նկատմամբ:

Ըստ բողոքի հեղինակի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասով հակընդդեմ հայցվորների պահանջը մերժվել է՝ եզրահանգելով, որ իրենց հոր ժառանգությունն ընդունելու վերաբերյալ որևէ ապացույց դատարանին չի ներկայացվել:

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է եկել հիմք ընդունելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1234-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներն այն մասին, որ ընդունած ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման և քանի որ Վարդանուշ Գրիգորյանի մահից հետո նրա դուստր Ռայա Գրիգորյանը փաստացի տիրապետել և կառավարել է նրա թողած ժառանգական գույքը՝ բնակելի տունը և տնամերձ հողամասը,



հետևաբար Ռայա Գրիգորյանն ընդունել է մոր թողած ժառանգությունը և այն Վերաքննիչ դատարանի կողմից համարվել է ընդգրկված նրա ժառանգության զանգվածի մեջ:

Բողոքաբերը համամիտ չէ Վերաքննիչ դատարանի այն մոտեցմանը, որ Ասծատուր Գրիգորյանի մահից հետո նրա թողած ժառանգությունը նոտարիատ դիմելու եղանակով ընդունել է վերջինիս կինը, ինչպես նաև նրանց հայրը 1/2-ական բաժնով փաստացի տիրապետման եղանակով, քանի որ, եթե Դատարանն ընդունել է, որ ԼԴՀ քաղաքացիական օրենսգրքի 1234-րդ հոդվածի և նախկին քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածների պահանջները կիրառելի են սույն վեճի լուծման համար, ապա պետք է, որ այդ համատեքստում ողջ տան նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչվի միայն նրանց հայրը:

Ըստ բողոքաբերի՝ Ռաֆայել Գրիգորյանը փաստացի տիրապետման եղանակով դեռևս 1992 թվականին ընդունել է իր հոր՝ Ասծատուր Գրիգորյանի թողած ողջ ժառանգությունը, որն էլ հիմք ընդունելով դիմել են Դատարան նման հայցապահանջով՝ ակնկալելով այդ հիմքով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու թիվ 1307 տեխանձնագրում Վարդանուշ Գրիգորյանի անվամբ կատարված գրառումն ամբողջությամբ անվավեր ճանաչել:

Բողոք բերողը նշել է, որ Ասծատուր Գրիգորյանի տունը չի կարող համարվել ամուսինների համատեղ սեփականություն, քանի որ Բնակելի տունը Ասծատուր Գրիգորյանի կողմից ձեռք է բերվել 1945 թվականի ապրիլի 12-ին՝ առուվաճառքի պայմանագրի հիման վրա, իսկ ամուսնությունը գրանցվել է 1947 թվականի փետրվարի 28-ին:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը հիմնավորվել է նրանով, որ Գերագույն դատարանի որոշումը կապահովի օրենքի միատեսակ կիրառությունը, դրա ճիշտ մեկնաբանումը, կնպաստի իրավունքի զարգացմանը, և որ բողոքարկված դատական ակտի կայացման արդյունքում բողոքաբերների համար առաջացել են ծանր հետևանքներ, այն է՝ նրանք զրկվում են իրենց հոր թողած ժառանգական ողջ գույքի նկատմամբ ժառանգության ընդունման ճանապարհով սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է մասնակի /բացի Էրիկ Ալբերտի Գրիգորյանի հայցապահանջի մասով/ բեկանել Վերաքննիչ դատարանի ԸԻԴ/0011/02/18 քաղաքացիական գործով 2022 թվականի մարտի 03-ին կայացված դատական ակտը, փոփոխել այն՝ կայացնել նոր դատական ակտ՝ սկզբնական հայցապահանջը մերժելու և հակընդդեմ հայցվորների պահանջը բավարարելու մասին կամ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 2017 թվականի նոյեմբերի 03-ին ամուսնության ակտի գրանցման մասին տեղեկանքի համաձայն՝ Ասծատուր Խաչատուրի Գրիգորյանի և Վարդանուշ Ռուբենի Սարգսյանի ամուսնության ակտային գրանցումը կատարվել է ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնում 1947 թվականի փետրվարի 28-ին՝ թիվ 72 համարի տակ: Ամուսնությունից հետո ամուսինները շարունակել են կրել Գրիգորյան ազգանունը:

2. 2017 թվականի նոյեմբերի 03-ի մահվան ակտերի գրանցման վերաբերյալ տեղեկանքների համաձայն՝ Ասծատուր Խաչատուրի Գրիգորյանի մահվան ակտային գրանցումը կատարվել է ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնում 1991 թվականի սեպտեմբերի 04-ին՝ թիվ 273 համարի տակ, իսկ Վարդանուշ Ռուբենի Սարգսյանի մահվան ակտային գրանցումը

կատարվել է ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնում 2006 թվականի փետրվարի 06-ին՝ թիվ 54 համարի տակ:

3. 2017 թվականի նոյեմբերի 03-ի ծննդյան գրանցման վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Ռայա Ասծատուրի Գրիգորյանի ծննդյան ակտային գրանցումը կատարվել է ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնում 1947 թվականի փետրվարի 28-ին՝ թիվ 107 համարի տակ, «հայրը» տողում նշված է Ասծատուր Խաչատուրի Գրիգորյան, «մայրը» տողում՝ Վարդանուշ Ռուբենի Գրիգորյան:

4. 2019 թվականի հունիսի 06-ի ծննդյան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Ռաֆայել Ասծատուրի Գրիգորյանի ծննդյան ակտային գրանցումը կատարվել է ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնում 1949 թվականի դեկտեմբերի 06-ին՝ թիվ 406 համարի տակ, «հայրը» տողում նշված է Ասծատուր Խաչատուրի Գրիգորյան, «մայրը» տողում՝ Վարդանուշ Ռուբենի Գրիգորյան:

5. Թիվ 20042017-01-0009 ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենի համաձայն՝ Դավիթ Հենրիխի Գրիգորյանը հանդիսանում է Ստեփանակերտ քաղաքի Ա.Իոսիֆյան փողոցի թիվ 36 բնակելի տան սեփականատերը:

6. Ռուսերենից հայերեն լեզվով թարգմանված և նոտարական վավերացում ստացած ԺԳ N488152 և ԺԳ N271572 ծննդյան վկայականների համաձայն՝ Արթուր Ռաֆայելի Գրիգորյանի ծննդյան ակտային գրանցումը կատարվել է Ստեփանակերտ քաղաքում 1985 թվականի հուլիսի 11-ին՝ թիվ 668 համարի տակ, «հայրը» տողում նշված է Ռաֆայել Ասծատուրի Գրիգորյան, «մայրը» տողում՝ Կարինե Լևոնի Գրիգորյան, Արմեն Ռաֆայելի Գրիգորյանի ծննդյան ակտային գրանցումը կատարվել է Ստեփանակերտ քաղաքում 1987 թվականի ապրիլի 08-ին՝ թիվ 365 համարի տակ, «հայրը» տողում նշված է Ռաֆայել Ասծատուրի Գրիգորյան, «մայրը» տողում՝ Կարինե Լևոնի Գրիգորյան:

7. 2019 թվականի մարտի 05-ի մահվան ակտի գրանցման մասին տեղեկանքի համաձայն՝ Ռաֆայել Ասծատուրի Գրիգորյանի մահվան ակտային գրանցումը կատարվել է ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնում 1992 թվականի նոյեմբերի 04-ին՝ թիվ 1154 համարի տակ:

8. 2019 թվականի հոկտեմբերի 10-ի ծննդյան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի պատճենի համաձայն՝ Էրիկ Ալբերտի Գրիգորյանի ծննդյան ակտային գրանցումը կատարվել է ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնում 1971 թվականի մարտի 23-ին՝ թիվ 159 համարի տակ, «հայրը» տողում նշված է Ալբերտ Ասծատուրի Գրիգորյան, «մայրը» տողում՝ Սվետլանա Իշխանի Գրիգորյան:

9. Ռուսերենից հայերեն լեզվով թարգմանված և նոտարական վավերացում ստացած ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Ասծատուր Խաչատուրի Գրիգորյանի գույքի նկատմամբ ժառանգ է համարվում նրա կինը՝ Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանը: Ժառանգական գույքը բաղկացած է բնակելի տնից, ընդհանուր օգտակար մակերեսը 65.0 քմ, այդ թվում՝ 31.90 քմ բնակելի մակերես, 559.20 քմ հողամասի վրա գտնվող Ստեփանակերտ քաղաքի Մ.Սպարապետ փողոցի թիվ 18 հասցեում բնակելի տան ապահովագրության գնահատումը՝ 634 դ.:

10. Ռուսերենից հայերեն լեզվով թարգմանված և նոտարական վավերացում ստացած թիվ 49 առ 07.07.1993թ. պարտավորության համաձայն՝ թոշակառու Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանին տրվել է 700.000 ռուբլի տան վերականգնման համար՝ մինչև 2013 թվականի հուլիսի 07-ը մարելու ժամկետով:

11. Ռուսերենից հայերեն լեզվով թարգմանված և նոտարական վավերացում ստացած Մ.Սպարապետ փողոցի թիվ 18 տան գրքի համաձայն՝ Մ.Սպարապետ փողոցի թիվ 18 տունը պատկանում է քաղաքացի Վարդանուշ

Ռուբենի Գրիգորյանին՝ համաձայն 1994 թվականի հուլիսի 04-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի:

12. Վկա Գագիկ Աղաջանյանը Դատարանում ցուցմունք է տվել, որ ինքն այդ տանն ապրել է 5 տարի՝ 2009 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2014 թվականի դեկտեմբեր ամիսը: Այդ ժամանակ տան հետ կապված հարցերն ինքը կարգավորել է Ռայա Գրիգորյանի հետ: Վարձով բնակվելու ժամանակ տան հետ կապված որևէ այլ անձանց հետ առնչություն չի ունեցել, բացի Հայցվորի մորից, Դավիթը երբեմն գալիս գնում էր այդ տուն, իսկ մնացած գործերով զբաղվում էր նրա մայրը: Ըստ իրեն՝ տունը որպես վարձակալություն է տրվել որպես իրենց տուն: Ինքը Դատարանում է իմացել, որ Արթուրն ու Դավիթը եղբայրներ են:

13. Վկա Օլեգ Ալեքսանյանը Դատարանում ցուցմունք է տվել, որ ժառանգական հարցերի մասին ինքը տեղյակ չի, տեղյակ է վեճի մասին, 2003 թվականի աշնանից մինչև 2009 թվականի աշունն այդ տանն ապրել է վարձով: Սկզբից Դավիթի միջնորդությամբ տունը վարձակալել է և վարձը տալիս էր նրա մորը: Ինքն այդ տանն ապրում էր, երբ մահացել է Դավիթի տատիկը: Տատիկի մահից հետո շարունակել է բնակվել այնտեղ, մինչև մահանալը սկզբից տատիկն էլ էր եկել և պայմանավորվել նրանց հետ, կոնկրետ տատիկի կենդանության օրոք, իր հիշելով, գումարը տալիս էր Ռայա Գրիգորյանին, ուրիշ այլ անձի ինքը վարձավճար չէր փոխանցել և որևէ մեկը չէր ներկայացել որպես տան սեփականատեր և նույնիսկ գումարը Դավիթին էլ չէր տալիս: Մինչև տատիկի մահանալը և դրանից հետո վարձավճարը տալիս էր տիկին Ռայային: Եթե տատիկը դեմ լիներ տանն իր ապրելուն, ապա տիկին Ռայան չէր կարող հակառակ տատիկի իրեն վարձով տունը տար: Վարձավճարը տալու ժամանակ ինքը համոզմունք ուներ, որ այն տալիս է երկուսին, քանի որ նրանք միասին էին ապրում: Տատիկի մահից հետո քննարկվել են վարձավճարի չափը, բայց երբ իր աշխատավարձը բարձրացել է, տան վարձավճարը բոլորի տների հետ միասին, ինքը ևս բարձրացրել է: Արթուր Գրիգորյանին որպես ծանոթ տղա տեսել է, գիտի, որ նա ևս եկել է այդ տուն: Տատիկի մահից հետո չի հիշում՝ եկել է նա այդ տուն, թե՛ ոչ: Իր պայմանավորվածությունը եղել է Ռայա Գրիգորյանի հետ:

14. Վկա Կարինե Գրիգորյանը Դատարանում ցուցմունք է տվել, որ ամուսնանալուց հետո ապրել են իր կեսբայրի և կիսուրի հետ, իր երկու երեխաներն այնտեղ են ծնվել, պապիկի մահանալուց հետո գնացել են Հայաստան: Իր ամուսինն ու Ալբերտն ապրել են այնտեղ: Ամուսնու մահից հետո եկել են, տուն չի եղել: Ինքը դիմել է տունը վերանորոգելու համար, Ալբերտը, Ռայան և մյուս եղբայրն Ուկրաինայից օգնել են իրեն, և տատիկը միշտ ասում էր, որ տունն Արթուրին է լինելու: Ինքը՝ որպես միայնակ կին, բոլորի հետ էլ լավ հարաբերություններ է ունեցել և իր ամուսնու քրոջ՝ Հայցվորի մոր մահից հետո առաջացել է այդ խնդիրը: Բոլորն էլ խնամել են Վարդանուշ Գրիգորյանին: Բոլորով միասին են գնացել Երևան՝ 1992 թվականի օգոստոսի 25-ին: Ամուսնու զոհվելուց մոտ 1 տարի անց վերադարձել են, պապիկի տարին նշել են իր ամուսինն ու Ալբերտը: Վերադառնալուց հետո տատիկը գնացել է Ռայայի տուն, ինքը տուն է ստացել և ապրել են Հեքիմյան փողոցում: Կիսուրն իր աղջկա տանն էր ապրում, սակայն տունը վերանորոգելուց հետո մի որոշ ժամանակ ապրել է իր տանը: Տան վերանորոգումը տևել է մոտավորապես երեք տարի՝ մինչև 1996 թվականը: Մինչև այդ տանը ոչ ոք չի ապրել: Իր ամուսնու ընկերն է օգնել տունը վերանորոգել: Տատիկը միշտ ասում էր, որ քանի որ իր որդին զոհվել է, ապա տունը տալու է Արթուրին: Տան վերանորոգումից հետո միասին որոշել են, որ իր ամուսինը չկա, բոլորն օգնելու են: Ամեն ինչ ղեկավարել է Ալբերտը: Տունը տվել է վարձակալության, գումարը կիսվել է երեք հոգու մեջ, նույնիսկ Ալբերտն իր բաժինը տվել է իրեն: Այդ ամենն իրենք երեքով էին որոշում: Ռայայի մահից հետո իր որդին ցանկացել է ամուսնանալ, գնացել է Դավիթի մոտ ասել, որ ինքը գնա և ապրի այնտեղ, իսկ Դավիթն ասել է, որ այդ տունն

իրենն է: Վարդանուշ Գրիգորյանի մահից հետո այդ տանն ապրել են վարձակալներ: Ռայա Գրիգորյանը ևս այնտեղ չի ապրել: Վարձակալները տան վարձը տվել են Ռայային, իրեն գումարը տվել է Ռայան կամ Ալբերտը: Տատիկի մահից հետո տնից իրեր չեն վերցրել, իրեր վերցրել է Ռայան:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով կողմերի վճռաբեկ բողոքները նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ դրանք մասնակի հիմնավոր են և ենթակա բավարարման, իսկ ԱՀ վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը բեկանման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության ծագման պահին գործող նախկին քաղաքացիական օրենսգրքի 530-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգումն իրականացվում է ըստ օրենքի և ըստ կտակի: Ժառանգումն ըստ օրենքի տեղի է ունենում, երբ և որքանով այն չի փոփոխվել կտակով: Սույն գործով ժառանգատու Ա.Գրիգորյանը կտակ չի կազմել: Նույն օրենսգրքի 535-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ըստ օրենքի ժառանգման դեպքում հավասար բաժնով ժառանգներ են հանդիսանում առաջին հերթին՝ մահացածի զավակները /այդ թվում՝ որդեգրվածները/, ամուսինն ու ծնողները /որդեգրողները/, ինչպես նաև մահացածի այն երեխան, որը նրա մահից հետո է ծնվել: Նույն օրենսգրքի 549-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին: Նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ասծատուր Գրիգորյանի մահից հետո առաջին հերթի ժառանգներ են հանդիսացել նրա չորս երեխաները՝ Ալբերտ, Ռոբերտ, Ռայա և Ռաֆայել Ասծատուրի Գրիգորյանները և կինը՝ Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանը: Ասծատուր Գրիգորյանը կտակ չի թողել, ու նշված ժառանգներից ոչ ոք օրենքով սահմանված վեց ամսվա ընթացքում ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարություն չի տվել /գործի նյութերում նման տվյալներ բացակայում են/, այսինքն՝ նշված եղանակով ժառանգության ընդունում տեղի չի ունեցել:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ եթե օրենսդիրը նոտարական մարմնին դիմում տալու եղանակով ժառանգությունն ընդունելու համար հատուկ ընթացակարգ է նախատեսել, ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը: Ընդ որում, օրենսդիրը որևէ վերապահում չի նախատեսել այն մասին, թե ինչպիսին կարող է լինել ժառանգական զանգվածի մեջ մտնող գույքը: Դա կարող է լինել նաև ժառանգատուի անձնական գույքը /իրերը/:

Այսինքն, ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնահատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե առկա է, արդյոք, ժառանգի կամքը և ցանկությունը՝ ընդունելու ժառանգությունը, թե ոչ, և արդյոք ժառանգությունն ընդունելու համար ժառանգն օրենքով սահմանված ժամկետում կատարել է ժառանգատուի գույքի փաստացի տիրապետմանն ու կառավարմանն ուղղված ակտիվ գործողություններ՝ կոնկրետ նպատակ ունենալով իր տիրապետման տակ վերցնելու ժառանգական գույքը: Ընդ որում, այդ

գործողությունները կարող են կատարվել ինչպես իրենց իսկ ժառանգների, այնպես էլ նրանց հանձնարարությամբ՝ այլ անձանց կողմից:

Սույն գործի նյութերից հետևում է, որ առաջին հերթի ժառանգներից Ռոբերտ Գրիգորյանը դեռևս մինչև ժառանգության բացումը տեղափոխվել է Ուկրաինա և իր հոր թողած ժառանգական գույքի նկատմամբ երբևէ հավակնություն չի ունեցել ու մահացել է սույն գործի դատաքննության ընթացքում, դատաքննության ընթացքում մահացել է նաև Ալբերտ Գրիգորյանը: Մյուս առաջին հերթի ժառանգներից Վարդանուշ և Ռայա Գրիգորյանները ժառանգատուի մահից հետո մեկնել և ժամանակավորապես բնակվել են ՀՀ-ում՝ կապված այդ ժամանակ ԼՂՀ-ում տեղի ունեցած ռազմական գործողությունների հետ, որտեղից վերադարձել են 1992 թվականին: Մյուս առաջին հերթի ժառանգներից Ռաֆայել Գրիգորյանը հոր մահից հետո տեղափոխվել և բնակվել է վիճելի առանձնատանը, որտեղ էլ գոհվել է 1992 թվականի հոկտեմբերի 19-ին թշնամու կողմից Ստեփանակերտ քաղաքի ռմբակոծության ժամանակ: Ստեփանակերտի թիվ 1 նոտարական գրասենյակի նոտարի կողմից 1994 թվականի հուլիսի 04-ին Վարդանուշ Գրիգորյանին տրվել է վիճելի անշարժ գույքի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, որի հիման վրա էլ դեռևս 1988 թվականի փետրվարի 09-ին տրված թիվ 1307 տեխանձնագրում սեփականատեր Ասծատուր Գրիգորյանի անունը ջնջվել և կատարվել է «Վարդանուշ Ռուբենի Գրիգորյան» գրառումը:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ գործի նյութերով, մասնավորապես՝ հայցվոր Դավիթ Գրիգորյանի, հակընդդեմ հայցվորներ Արթուր և Արմեն Գրիգորյանների, վկաներ Գագիկ Աղաջանյանի, Օլեգ Ալեքսանյանի, Կարինե Գրիգորյանի ցուցմունքներով հաստատվում է այն փաստը, որ Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանը համարվում է ժառանգությունն ընդունած, և Ասծատուր Գրիգորյանի մահից հետո թողած ժառանգական զանգվածի մեջ մտնող Բնակելի տունն ընդունվել է որպես մեկ ընդհանուր զանգված, իսկ նրա մահից հետո նրա դուստրը՝ Ռայա Ասծատուրի Գրիգորյանը փաստացի տիրապետել ու կառավարել է ժառանգատու Վարդանուշ Ռուբենի Գրիգորյանի թողած ժառանգական գույքը՝ Բնակելի տունը և տնամերձ հողամասը, արձանագրելով նաև, որ վեճի առարկա գույքը՝ Բնակելի տունը, ժառանգատու Վարդանուշ Գրիգորյանին պատկանող մասով Ռայա Գրիգորյանի մահից հետո ներառված է եղել նրա ժառանգության զանգվածի մեջ:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ գործի նյութերով, մասնավորապես՝ հակընդդեմ հայցվորներ Արթուր և Արմեն Գրիգորյանների, վկա Կարինե Գրիգորյանի ցուցմունքներով հաստատվում է, որ հակընդդեմ հայցվորներ Արթուր և Արմեն Գրիգորյանների հայրը՝ Ռաֆայել Ասծատուրի Գրիգորյանը, իր հոր՝ Ասծատուր Խաչատուրի Գրիգորյանի մահից անմիջապես հետո բնակվել է վերջինիս սեփականության իրավունքով պատկանող Բնակելի տանը մինչև մահվան օրը՝ 1992 թվականի հոկտեմբերի 19-ը, նպատակ ունենալով ինչպես պահպանելու այդ գույքը, այնպես էլ ժառանգությունն ընդունելու, ու հաստատված փաստ է համարել այն, որ հակընդդեմ հայցվորների հայրը՝ Ռաֆայել Գրիգորյանը, իր հոր՝ Ասծատուր Գրիգորյանի մահից հետո բնակվելով վերջինիս սեփականության իրավունքով պատկանող Բնակելի տանը՝ փաստացի տիրապետման եղանակով ընդունել է նշված ժառանգական գույքը, միաժամանակ արձանագրելով, որ հակընդդեմ հայցվորները որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չեն ներկայացրել ապացուցելու համար այն փաստը, որ նրանք, ինչպես իրենց հոր՝ Ռաֆայել Գրիգորյանի, այնպես էլ իրենց պապ՝ Ասծատուր Գրիգորյանի մահից հետո բացված ժառանգությունը, մասնավորապես՝ Բնակելի տունն ընդունել են կամ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով, կամ ժառանգության բացման վայրի նոտարական մարմին ղիմելու միջոցով:

Սույն գործով հայցվոր կողմն իր բողոքում կասկածի տակ է դրել այն, թե ինչու է նոտարը Ասծատուր Գրիգորյանի մահից հետո ժառանգությունը լրիվ ծավալով տվել միայն կնոջը, չբացատրելով, որ ժառանգական գործում առկա է Ռաֆայել Գրիգորյանի և մնացած բոլոր ժառանգների ժառանգությունից հրաժարվելու մասին դիմումները, իսկ պատասխանող կողմը վիճարկել է ինչպես Բնակելի տունը ժառանգատու Վարդանուշ Գրիգորյանին պատկանելու, այնպես էլ ժառանգատու Ասծատուր Գրիգորյանի մահից հետո օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում նրա կողմից ժառանգության ընդունման փաստերը: Նման փաստերի առկայությունը կամ բացակայությունը կարող է պարզվել միայն ժառանգական գործի նյութերով, որը սույն գործի շրջանակներում չի ուսումնասիրվել ու իրավական գնահատման չի արժանացել, այդ այն դեպքում, երբ միայն ժառանգական գործի նյութերով կարելի է պարզել, թե ի՞նչ ժամկետներում են դիմել ժառանգները ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարությամբ ժառանգությունն ընդունելու մասին, արդյո՞ք կան անձինք, որոնք օրենքով սահմանված ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետում հրաժարվել են ժառանգությունից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն, դատարանը բոլոր ապացույցները գնահատում և քննարկում է համակցության մեջ, ստուգում է մեկը մյուսի հետ համեմատելով և դրանց միջև հակասություններ նկատելու դեպքում պարզում այդ հակասությունների էությունը, գործի համար կարևորությունը՝ օրինական և հիմնավորված վճիռ կայացնելու համար:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները ու ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա:

Ստորադաս դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, այսինքն՝ թույլ է տվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի խախտում, ինչը հանգեցրել է գործի ըստ էության սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ

բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Այսպիսով, Գերագույն դատարանը վերը նշված հիմքի առկայությունը բավարար է համարում ԱՀ վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 03-ի որոշումը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով բեկանելու և գործն ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

**5. Գերագույն դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Վերաքննիչ կամ վճարբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճը վերջնական լուծում չի ստացել, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հայցվորի /հակընդդեմ պատասխանող/ ներկայացուցիչ Ռոման Երիցյանի և պատասխանողների /հակընդդեմ հայցվորներ/ ներկայացուցիչ Արտյուշա Մաղաթյանի վճարբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: ԸԻԴ/0011/02/18 քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 03-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ  
Կ.ՂԱՐԱՅԱՆ  
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Հ.ԽԱՉԱՏԵՑԱՆ